

ՀԱՅԱՍՏԱՆ
ՎՐԱՐԴԻ ԵՐԵՄՈՒՅԹԻ

891.99
10-71

ողիոց և վերապահնել

19 NOV 2011

831.93

7-71 4Y

Վազն թուղթեւս

3 3 1 4 1002
32694

ՀՈՎՆԱԹԱՆ
ՎՈՐԴԻ ՅԵՐԵՄԻԱՅԻ

1346



1 9 3 4

Միբայել Նորանդյանի
հիշատակին

Ա

Դարեւից եւ վեր, անժամանակ
թվականներից՝ քաղաքը լիսան կա-
տարին եր:

Յեվ քաղաքը կառուցված եր սպի-
տակ քարից, վարովհետև լեռն ամ-
րող սպիտակ քարից եր:

Քաղաքի տներից, ահավոր ան-
դունդի վրա, կախվում էին սպասը-
գամբներ, վորոնք մթնաշաղերին
որովզում եյին, ինչպես յերազում:

Հին ժամանակների իշխողները,
ուղարկան նպատակների համար, քա-
ղաքի արեւելյան կողմը վիթխարի ամ-
րոց կառուցին: Այդ ամրոցի շինու-
թյան համար իշխողները դորձածե-

գ և անը առել առաջ արան

Ճմեռը՝ այդ բերքով կերակրվում ե-
յին բաղմաթիվ աղքատներ, վորոնք
թափվում եյին լեռան քաղաքը ու-
րիշ աշխարհներից:

Ժամանակի ընթացքում, ուազմա-
կան նպանուակների համար կա-
ռուցված ամրոցը, վորի սլատերի
մի մասը քայքայվել եր ժամանակի
ծեծից և բնական յերկրաշարժերից,
վերածվել եր չուկայի և ընդարձակ
պահեստների: Հին զենքերի—տեղե-
րի, նետերի, աղեղների և զրահնե-
րի տեղ—զինապահեստներում չող-
շողում եյին ծիրանը, գեղձը, նուռը
և խաղողը:

Գ

Յեվ ժամանակի ընթացքում ավա-
զակները նվազեցին, զնալով անհետա-
ցան:

Ո՞ւր գնացին, ի՞նչ յեղան, ինչ-
պե՞ս կորան: Դա ժամանակի քմա-
հաճույքն և գաղտնիքը, վո՛չ վոք
չի իմանում:

Տակալին սրանից հարյուր տարի
սուած՝ քաղաքի բնակիչները, որը
բոլոր, իրենց քրավինքը թափառմ եյին
դաշտում և այդիներում, իսկ զիշեր-
ները՝ բարձրանում եյին քաղաքը,
վորովհետեւ գիշերները դաշտն եյին
լցփում արյունաբու ավաղակներ:

Ավաղակներն սպանում եյին մարդ-
կանց, կողսպատում և հեռանում,
յերբ լուսաստղն եր վասյլում պաղ-
պաջուն յերկնքում:

Ֆաշուում, տակալին հարյուր տա-
րի սրանից սուած, վո՛չ մի տուն չը-
կար, կային միայն ուսենու ճյուղե-
րից շինված խուզեր, վորոնք ծառա-
յում եյին մարդկանց միայն ցերեկ-
ները:

Բերքն առաստ եր լինում, այնքան
առատ, վոր վո՛չ միայն պահում եր
լեռան քաղաքի բնակիչներին և ա-
վաղակների հոծ խմբերին, այլ և

Ասում եյին, վոր բնակչության
մեջ ցանցառ միրուքներով, թուխ
մորթով, խճճուն մաղերով, կարմը-
րած, սև աչքերով, բարակ, ճկուն
և բարձրահասակ այն բնակիչները,
վորոնք տեղական բարբառը խոսում
եյին թշվատ և բոլորովին այլ յիրա-
ժշտությամբ, Հին ավագակների մը-
նացորդներն են, վորոնց՝ հողի ան-
քննիկի, անփմանալի ուժը քաշեց,
զողեց իրեն և մնացին այդ հողի վր-
բա և սկսեցին ըմբոշինել քրահինքով
հաց վաստակելու անհուն հաճույքը:

Յերբ ավագակներն անհետացան՝
լեռան քաղաքի բնակիչները նորից
վուները քաշեցին դեպի լեռան քա-
ղաքը գիշերները, ըստ դարերի սովո-
րության, իսկ նրանց աչքերը մնացին
դաշտում։

Յեկ նրանցից վոմանք մտածեցին
այսպես.

«Քանի վոր չկան սովագակներ և
իյտնքն ասպահով ե, ինչո՞ւ վեր

բարձրանալ ամեն գիշեր և վար իշ-
նել ամեն առավոտ՝ թողնելով մրգե-
րըն ու ծաղիկներն անտեր»։

Յեկ սրանից հարյուր տարի առաջ
դաշտում կառուցվեց, լեռան սպի-
տակ քարից, առաջին տնակը։

Կառուցվեց և յերկրորդ տնակը։

Կառուցվեց յերրորդը, չորրորդը,
Հինգերորդը—բոլորն ել լեռան սպի-
տակ քարից։

Յերբ դաշտում տներ կառուցելը
դարձավ առորյա սովորաւթյուն, յերբ
որը նոր, տնակը նոր եր, լեռան կո-
ղից սպիտակ քար բերելը դարձավ
աաժանակիր մի աշխատանք, վո՛չ
մարդկային ուժն եր բավում, վոչ
տնասուների փոխադրական միջոցը,
վորովհետեւ յիթե սրանք բոլորն
դրադվելին այդ աշխատանքով, դաշ-
տի բարիքը կը մնար դաշտում։

Յերկար եր տեսում և տնակ կառու-
ցելը։ Մինչեւ լեռան կողից քարն
եյին պոկում, դաշտ բերում, հղկում

և պատը շարում, ձմեռը վրա յեր
հանում, առանց կտուրը ծածկելու:

Դ

Յերբ ջրերը վարարում եյին ձյան
հալոցքից կամ հորդառառ անձրեվ-
ներից, գաշտում տեղ տեղ բնական
ալվաններ եյին գոյանում:

Այդ ավազանները, կեզիչ արևի
տակ, այն արեի, վոր քաղցրացնում
եր միրզը և արնաներկում վարդը,
արագորեն շողիանում եյին, հասա-
կում թողնելով աղնվագույն տեսակի,
կավ: Խակ կավը, չորանալուց հետո
ձեղքավում եր թանձը շերտերով:

Յեկ յերխասարդ բնակիչներից
մեկը՝ Անդրեասը, վորդի քարտաշ
Դավթի, մտածեց ողտագործել աղ-
նվագույն այդ կավը և շինել աղ-
յուսներ:

Նա տեսել եր գաշտի հին քաղաք-
ների և գյուղերի մնացորդները,

տեսել եր նաև, վոր հին բնակիչներն
աղյուսից քաղաքներ և գյուղեր եյին
կառուցել, վորոնք անհետացել, հո-
ղին հայտառը եյին զարձել ժամանա-
կի ծանր անխիլի տակ:

Յեկ գաշտի ցաք ու ցրիվ տնակնե-
րից հեռու՝ բաց գաշտում, յերխաս-
սարդ Անդրեասը ձղնեց իրականացնել
իր մտածումը:

— Վորդի, — ասաց քարտաշ Դա-
վթը Անդրեասին, — մեղք ես, զուր
ես ճղնում, դրանից բան զուրս չի
զա, կավը չի դիմանա ահապոր կայ-
ծակին, քաք և հարկավոր:

— Հայր, — պատասխան տվեց
Անդրեասը, — կայծակը կը խփի հողի
մեջ և կկորավի, իսկ քարին զարնը-
վելով, կը վշրովի, հարյուրավոր
զնդակների վերածվելով, քարն ավե-
լի վտանգավոր է, քան կավը:

Հայրը չհամոզվեց, բայց չեր կա-
րող ստիպել վորդուն, վոր ձեռք քա-
շի իր նպատակից, վորովհետեւ վոր-

դու վերին չըթունքների վրա վո-
լորվում եյին սե բեխեր, իսկ նրա
կնոջ կրծքից արդեն յերկրորդ մա-
նուկն եր կախվում:

Յեվ Անդրեասը արհեստական թրմ-
բեր կառուցեց Հեղեղների դիմաց և
շինեց ավաղաններ: Յերբ Հեղեղները
բարձրացան, յեկան, լցրին այդ ա-
վաղանները, չողիացումից հետո՝
հատակում մնաց աղնիադոյն կա-
վը:

Յեվ Անդրեասը շինեց չորս տախ-
տակե չերտից մի քառակուսի շրջա-
նակ, յերկու մատի խորությամբ,
թափեց աղնիադոյն կավին այդ շրջա-
նակի մեջ և, քաշելով շրջանակը
դուրս, թողեց, վոր կավը չորտնա և
դառնա աղյուս:

Այդ տարին գաշտում տասնյակնե-
րով աներ կառուցվեցին հում աղ-
յուսից, բայց հաջորդ տարին, առա-
ջին զարնանից, աղյուս թափող Ան-

դրեասը կառուցնց մի հնոց աղյուսը
թրծելու համար:

Այդ հնոցը բոլորաձեւ եր, յերկու
մարդահասակ բարձրությամբ: Յերբ
աղյուսները չորանում եյին, Անդրեա-
սը բերում եր, խնամքով զարսում
հնոցում կանոնափոր շարքերով և ա-
պա սկսում հնոցի տակը վառել չո-
րացած խոտը:

Մի քանի ժամկա ընթացքում աղ-
յուսները թրծվում եյին, մի դիշեր-
վա մեջ սառչում: Անդրեասը դուրս
եր բերում թրծված, կտրմբած և
թեթեացած աղյուսները և զարսում
արեի տակի:

Այդ տարին աների կառուցումն ա-
վելի և ավելի արագացավ, աները
բոզմացան, վորովհետեւ Անդրեասի
աղյուսից ավելի հեշտ եր պատ շարե-
լը, իսկ Եթանության մասին խոսք
անդամ չեր կարելի անել:

Սկզբում Անդրեասն այդ բոլորն
անում եր միայն կնոջ ոգնությամբ,

րայց հետպհնեոն անկարող յեղասի բառ
վարարել կառուցողների պահնջնե-
րին, ուստի նա ըերեց մարդիկ, նը-
րանց տվեց հաց և որավարձ և աշխա-
տեցրեց իր հետ, մահավանդ յերբ
կնոջ դիրկը լցվեց յերեխաներով,
մեկին հաջորդեց յերկուսը, յերեքը,
չորսը և զեռ ևս պիտի հաջորդեցին
չինզը և վեցը:

Ենուան քաղաքի բնակիչների մեծա-
մասնությունն իջալ դաշտը, վոր-
տեղ մեղմ սղոխը որորում եր ծառերի
տերեները, ծաղիկները, և կանանց
ծամերը, ողը մեղմ եր և առողջա-
րար, հենց ինուան ստորոտից թըդ-
խում ելին քաղցր և սառը ջրերը և
առվակներով անցնում դաշտից:
Դաշտի բարիքը լեռան դագաթը փո-
խադրելու այլևս կարիք չկար, մա-
նուկներն անդամ աշխատում ելին
պարտեզներում և այդիներում, վո-
րովհետև տները կառուցված ելին
հենց պարտեզներում և այդիներում,

մեծ, բազկատարած ծառերի հովանի
ների տակ:

Դաշտի տները ծածկվում եյին յի-
ղեգյա չյուղերով և հողով: Հորդա-
ռատ, կատաղի անձրեներն աշնանը
ծակում եյին հողե կտուրները և վա-
զում տների ներքնակողմը:

Անդրեասն սկսեց շինել կիսախողո-
վակածե աղյուսներ, վորպեսղի կը
տուրները ծածկվեն այդ աղյուսնե-
րով:

Սկզբում դաշտեցիները չհավատա-
ցին, թե այդ կիսախողովակածե
աղյուսները կարաղ եյին անձրեները
պահել տների ներսը հոսելուց, ունափ
Անդրեասը քանդեց իր տան կտուրը և
վերաշինեց այն՝ այդ աղյուսներով:
Որինակը վարակիչ դարձավ և հա-
ջորդ տարին կիսախողովակածե աղ-
յուսները հացի պես ծախվեցին:

Կարմիր կղմինդրներով ծածկված
կտուրները պարտեզներում և այդի-

ներում նման եյին վարդե փնջերի՝
բոլորված կանաչ տերեներով։

Այս նոր տեսակի աղյուսը շինելու
համար՝ Անդրեասը դարձյալ ուներ
պարզ մի ձև— կազմ թափում եր մի
կեսագլանի վրա, վրան դնում մի ու-
ժիշ կիսագլան, արանքում թռղնելով
մի բաց շերտ, կեսագլանը քաշում
եր դուրս, թռղնելով, վար կավը չո-
րանու։ Չորանալուց հետո՝ թրծում
եր հնոցում, ինչպես պարզ աղյու-
սը։

Տները շատացան դաշտում։ Շատա-
ցան վո՞չ թե ամեն տարի, այլ ամեն
ամիս և ամեն շարաթ։ Խ՞նչ դործ ու-
նեյին այլիս լեռան դագաթում, մա-
նավանդ ձմեռը պարզապես ահար-
կու եր այստեղ, — բուք ու բորան,
կապարյա յերկինք, սառնամանիք,
լեռան դագաթը կտրվում եր աշ-
խարհից ամիսներով, իսկ դարնան
վերջերում և ամառը յերկինքի խորքե-
րից ճայթում եր ամպրոպը, կայ-

ծակը խփում սպիտակ քարե տնե-
րին և կիսում դանակի նման։

Անդրեասի գործը մեծացավ, բազ-
մացան դաշտեցիների պահանջները։

Յեվ Անդրեասը հիմքը դրեց առա-
ջին բրուտանոցին։ Սա ընդարձակ և
ցածր առաստաղով մի «սրահ» եր
փոքր լուսամուտներով, յերկարա-
ձև, ինչպես նաև։

Յեվ դաշտեցիները չմնացին իրենց
պարտեզներում և այդիներում, նը-
րանք կապեր հաստատեցին ուրիշ
քաղաքների հետ և նրանց հետ կապեր
հաստատեցին ուրիշ աշխարհներ։

Առաջ յերբ դաշտի բարիքը փոխադ-
րում եյին լեռան դագաթը, շուկա
եյին հանում հին ամրոցում, այժմ
դաշտի բարիքը լեռան գագաթում եր բերվում
Նոր քաղաքը լուսապատճենական
ՀԱՅԱ-ԾԵՐ

ԱՐ 3 ԱՐ 4 ԱՐ
Ա. Ա. Ա. Ա. Ա.

կը: Բարեքը լցվում եր այդ հրապարակում, լցվում և բլրանում: Ամբոցն ամայացավ, ինչպես մեռածուրուների բույնը, գարձավ հին մի հուշ, իսկ նոր քաղաքի հրապարակը ծաղկեց և հարստացավ:

Հին զետի ամերով, հարավի արեգակի շողով ու բույրով, գալիս եյին ուղտերի կարավանները, բերում հարավի քաղցրությունն ու դույնը, փոխում զաշտի հարստության հետ և հեռանում: Նրանց բոժոժների համերգը վերջանում եր աշնանը, իսկ դարունն սկսում եր նրանց բոժոժների յերգով և դաշտի անձրեսով:

Անդրեասը, բացի յերկու տեսակի աղյուսից, սկսեց շինել և արդեն կանոնավոր խողովակներ, վորոնք գործածվում եյին լուսն սասրութից անե բը ջուր բերելու համար, շինեց կժեր, փարչեր, զանազան չափի և ձեի ամաններ, դինու և ջրի կարասներ, թասեր և յերկարավիզ սրբակներ:

Պարզ, անարվեստ բրուտը ոկտեատու աղնվաղույն կավին իր յերեվակալության նախնական պարզ ձեվերը:

Այս բոլորի համար Անդրեասը բրուտանցում դրեց չարխեր, վարոնց վրա արդեն սկսեցին աշխատել իր չորս վորդիներից առաջին յերկուսը՝ Յերեմիան և Գրիգորը:

Անդրեասը տեսնում եր քաղաքը, վոր աճում եր իր աղյուսով, և տեսնում եր սերունդը, վոր աճում եր իր արյունով:

Յեվ նա առանձին խնամքով և ուշղրությամբ հետեւից իր վորդիների արհեստ տիբապետման:

— Յերեմիա՛, վորդի՛ս, — տսում եր Անդրեասը, — չկա աշխարհում մի բան, վորին կարելի լինի ավելի ձեվեր տալ, քան կավը, մանավանդա՛յս կավը:

Յեվ Անդրեասի վորդիներն աշխատում եյին բրուտանցում միշտ ուն-

կրնզիք վարպետ բրուտին, վար երենց հայրն եք:

Բրուտանցում Հոգ եր, կամի զգիմիք բրուտով հոգեցած: Զարխերը գասնում ելին և բրուտաների ձեռքերի տակ, լոլրծուն կազմ, դառնալով այնպես ինչպէ՝ մայր յերկիրը, վերածվում եր կանոնավոր և իմաստուն ձեվերի: Կամի կոչու և քոռային զանգիածը, յերբ դրվում եր չարփի սեղանի վրա և բրուտի վառները պատացնում ելին անիվը՝ վուչ վոք չեր կարող գուշտիել, թե կազի այդ կոչու զանգիածն ի՞նչ ձեվ եր ստանալու: Լոլրծուն կամը նախ կլորանում եր, լայնանում, ինչպես Հզի կնոջ փորբ, ապա նեղանում, նեղանում, գառնում եր յերկար մի վիզ, ինչպես վիզը կարասի և հանկարծմի փայտիկի ծայրով կտրվում եր և ահա պատրաստ եր Հողե յերկարավիզ անոթը:

Գինին յերբ հոսում եր այդ անո-

թից՝ յերկում եր, ինչողևս զարնանային ստուկիր: Դաշտի բնակիչները՝ ջուրը, զինին և թանը խմում ելին Անդրեասի բրուտանցում շինված և նրա հնոցում թրծվում Հողե կարմիր թասերով, խմում ելին անհատակ բավականությամբ: Ջուրը լցնում ելին կարմիր և թիթեվ կժերի մեջ, կախում ծառերի հովում, և յերբ ըմպում Ելին, ատամների եմալը չեր գիմանում ստուկությանը և քայլայվում եր:

Գիշերները՝ նրանք ջրով լիքը կուժը կախում ելին լուսամուտներից դուրս, Հյուսիսից վիշտ քամու առաջ, և նրանք, վորոնք իրիկունն առատ գինի Ելին խմել և մարմինները տուշորվում ելին ծարավից, վեր ելին կենում, բաց անում լուսամուտը, քաշում կույժը բերանները և խմում: Խմելիս՝ յերգում եր թե՛ կուժը, թե՛ կոկորդը:

Նոր քաղաքի շուրջը փոքրիկ գյու-

դեր ցանցիցին՝ կարմիր կտուրնեռ-
բով և կարմիր աղյուսի պատերով։
Կարմիր պատերին մաղլցեցին զդմե-
նիները և պատերի կարմիր ֆոնի վրա
կախվեցին դեղին դգումները։

Աշնան վերջերին, յերբ դաշտային
աշխատանքը վերջանում եր, և խաղ-
մուղը փրփրում հնձանում, դաշտը
բոլոր գեղնում եր և կարմրում։ Աշ-
նան արեվի տակ դեղին և կարմիր
տերեփներն որորվում եյին ողում և
ծփում կիսամերկ ծառերի տակ։
Թռչունները գաղթում եյին դեպի հա-
րավ՝ վաղ դաշտը թողնելով սառ-
ամանիքի փոքրիկ հերոսին՝ ճշնձ-
դուկին։

Զմեոը՝ կանոյք բամբակի բոժոժ-
ներ եյին մաքրում, ծամոն ծամում,
հղիանում, անվերջ շաղակրատում և
ծիծաղում, տղամարդկանցից գաղտ-
նի լպսոված պատմություններ պատ-
մում, իսկ տղամարդիկ խմում եյին

թանձր, թանաքի նման մուգ գինին և
քնում։

Իսկ բրուտանոցում լսություն եր
և ցուրտ։ Կավը սառչում եր, յեղյամ
կապում՝ սպիտակ և փածկլուն։
Զմեոը բոլոր՝ բրուտանոցում վո՛չ մի
վոտ չեր կոխում, չարխերը սառչում
եյին, զարակներից զինու կժերը նա-
յում եյին տիսուր և մոայլ, վորով-
հետեւ նրանց ընդերքը դեռ չեր ալ-
կոծել զինու ջերմությունը։

Ծերունի Անդրեասը, բոլորված իր
վորդիներով, աղջիկներով, հարսնե-
րով և թոռներով, կարդում եր ավե-
տարանը, մաղաղաթյա հոտավետ
գրքերը և պատմում լեռան քաղաքից,
քարտաշ Դավիթից և ամրոցից։

Զ

Դաշտի առաջին բրուտը, Անդրեա-
սը, վոր առաջին անդամ առաջին աղ-
յուսը թափից, տեսավ թոռների պա-

վակներին և տեսավ առաջին ծոռին :

Անդրեասի վորդիները, թոռներն ու թոռների զավակները սովորեցին ձեւվավորել կավը : Երանք յերբեք չի-մացան, թէ յե՛րը և ի՛նչպես սովորեցին, սովորեցին այնպես, ինչպես յերեխաները սովորում են ձեռները տանել բերանները :

Ծերունի բըուտին, սակայն, մի խորը ցավ եր անջռում : Իր անդրանիկ վորդի Յերեմիան զավակ չունեցավ : Հիսունը անց՝ կորցրեց Յերեմիան իր անպառուղ կնոջը, դարձավ տիուր, մուայլ և հուսահոտ :

Մի որ Անդրեասը կանչեց իր անդրանիկ վորդուն և ասաց .

— Բոլորս ել հող պիտի դառնանք, վո՞րդի, բայց անպառուղ հող դառնաւր մեղանչում և աստուծո դեմ, վորյերկնքուն ե, ամուսնացի՛ր, վո՞րդի, դեռ ջահել ես, դեռ ծառդ կծաղ կի և պտուղ կտա :

Յերեմիայի աչքերը փայլեցին յե-

րիտասարդ որերի նման, արյունը սուրաց յերակների մեջ :

Յեվ Անդրեասի տունը մտավ մի յերիտասարդ հարս, վորը, հակառակ իր ասրիքին, համարվեց մեծ հարսոր, իրը անդրանիկ զավակի կինը :

Յեվ Յերեմիայի ծառը ծաղկեց և տվեց զույնզգույն պատուզներ :

Ծերունի Անդրեասն ուրախացավ, փարավից ցավը նրա հողուց և պատրաստվեց մեռնելու խաղաղությամբ :

Նա սիրում եր Յերեմիայի անդրանիկ վորդի Հովհաննին, վորովհետեւի նրա մեջ տեսնում եր պատկերը իր հողու ու մարմնի : Նա թոռներ շատ ուներ, ուներ և թոռան զավակներ, տեսավ և իր առաջին ծոռին, բայց նրա բովանդակ սերը, այն սերը, վոր տածել եր զեպի կավը, դեպի մայր հողը՝ միասնացոծ և ավելի հզորացած, կհնտրունացավ Յերեմիայի անդրանիկ վորդու՝ Հովհաննի վրա :

— Յերեմիա՛, վո՛րդի, իմ անցնեաւուց հետո՝ լավ մտի՛կ առուր Հովհանաթանին, —ասում եր ծերունի Անդրեասը, բանում Հովհանաթանի գլուխը, չոյում, համբուրում աչքերը:

Յեղ Հովհանաթանը կապուտաչյա եր և գանդրաներ:

Բոլոր հին հարսները նախանձում եյին Հովհանաթանի մորը, վորովհետեկ ծերունին կանչում եր նրան իր մոտ, նստեցնում կողքին, բոնում նրա մինչև ծնկները հասնող ծամերը, չոյում և զմայլանքով և հողի կարոտով նայում նրա դեմքին, վոր դեռևս վարդապույն եր, հակառակ նրա արդեն յերեք զավակ ունենալուն:

է

Մի որ ծերունի Անդրեասը կանչեց Հովհանաթանին իր մոտ և ասաց.

— Բե՛ր զրիչ և թուղթ ու զրի՛ր: Հովհանաթանը, վոր արդեն տասե-

վեց տարեկան եր, բերեց թուղթ և զրիչ և ասաց.

— Պապի՛, պատրաստ եմ:

Ծերունու ականջին հնչեց կյանքի վսակյա ծնծղան: Տիրեց լուսթյուն: Ծերունին չեր խոսում, վորովհետեւնա ունինդրում եր իր կյանքի ամենահրապուրիչ յերպին:

Յերբ յերբը վերջացավ, ծերունի Անդրեասը հառաչեց և թելադրեց Հովհանաթանին զրելու.

— Հայրապետ ծնալ Առաքել, Առաքել ծնավ Դավիթ, Դավիթ ծնավ Անդրեաս, Անդրեաս ծնավ Յերեմիա, Գրիգոր, Պետրոս, Պողոս, Սաոս, Յուղաբեր, Հոփիսիմե, Յերեմիա ծնավ Հովհանաթան, Մարգարիտ և Դավիթ:

Հովհանաթանը զրի առալ ծերունու ասածներն արագորեն և նայեց պապին խոհականորեն:

Ծերունի Անդրեասը շարունակեց թույլ ձայնով.

— Հովնաթան ծնավ...

Յեվ ծերունին կանգ առաջ, կարո-
տաղին նայեց Հովնաթանի կապույտ
և չողովուն աչքերին:

Հովնաթանը շարսւնակեց դրել.

— Հովնաթան ծնավ Անդրեաս:

Ծերունի Անդրեասի հողու մեջ
թրթաց անմահությունը:

Նրա աչքերի առաջ ծաղկեց բաժ-
բակենին, նրա ականջները լսեցին
զարնան առվակի կարկաչը, նրա
սնդունքները ներշնչեցին կայի թարմ
բույրը և յերակներում դրնդաց ար-
յունը:

Ը

Բայց մահը յեկավ, վորովհետեւ
հսդնած մարմինը կարուսում և հո-
ղը, կարուսում է իր նախնական ձե-
զը:

Յեվ ծերունի բրուտը կյանքի ան-
կողում, վոր պիտի դառնար մահ-
ան անկողինը, ցանկություն հայու-

նեց՝ վոր ջոլով նրանք, վորոնք իրե-
նից եյին սհոել, հավաքվեն իր ջուր-
ջը:

Հավաքվեցին:

Հավաքվածների մեջ կային արդեն
պատկառելի ծերունիներ և պառավ-
ներ, բայց բոլորն ել յեկել եյին, ըստ
ծերունի Անդրեասի ցանկության, տո-
նական զգեստներով, վոսկեզարդ
ճակատներով, ատլաս ու խումաշ հա-
ղած: Նրանց մեջ կային մի քանի
որ առաջ ծնվածներ, ներկա եյին
նրանք, վորոնք արելի աշխարհի ա-
ռաջին լուսամուտի յետեւում թպըր-
տում եյին զուրս գալու, վորոնք
չպիսաի տեսնեյին ծերունուն, բայց
թերեւս, պիտի լսեյին նրա վերջին
խոսքերը:

Ծերունի Անդրեասը նշան արավ
իր անդրանիկ վորդի Յերեմիային,
վոր վերցնի իրեն և նստեցնի անկող-
նում: Յերեմիային ոզնեց տասնե-
վեցամյա Հովնաթանը, գանգրահեր և

կապուտաչյա : Նա դրեց բարձերը պա
սի մեջքին, թևվերի տակ և մի փոք-
րիկ բարձ ել, աղավնու փետրից,
զլսի յետեփում :

Ծերունի Անդրեասի սպիտակ, բայց
խիտ հոնքերը կախվեցին հանգելու
մոտ աչքերի վրա, ինչպես ամպերն
են սքողում վերջալույսների արյունա
թաթավ արեգակը : Նրա ձեռքերը,
հանգչեցրած սպիտակ բարձերի վրա,
դրեթե մի դարի պատմություն ու-
նելին : Այդ ձեռքերը, վորոնց կա-
պույտ յերակները ճյուղավորված ե-
լին, ինչպես դեսերը մայր յերկրի,
թափեցին առաջին աղյուսը և այդ
աղյուսից աճեց դաշտի մեծ և նոր քա-
ղաքը : Այդ ձեռքերով շինված կարմիր
գալերից բյուրավորներ խմեցին մուգ
զինին և յերջանկացան :

Հովնաթանը, վոր՝ բարձերը տեղա-
վորելուց հետո՝ կանդնած եր սնա-
րից մի քիչ հեռու, տեսավ, վոր պա-
պը նշան և անում մոտենալու իրեն :

Մոտեցավ նրան կապուտաչյա և
գանգրահեր պատանին և ճակտորը մո-
տեցը պապին :

Ծերունի Անդրեասը հոնքերը վեր
առավ, կարոտագին նայեց Հովնա-
թանի կապույտ աչքերին, ինչպես լեռ
ներից հուացող ճամբորդն և հառում
լեռնային կապույտ լճակին :

Յեվ ծերունի Անդրեասը խոսեց .

— Ինձանից մի՛ նեղանար, ի՛մ սե-
րունդ, բոլորիդ սիրում եմ, բայց
Հովնաթանին շատ ավելի յեմ սի-
րում, Հովնաթանն իմ պատկերն և,
յերբ յես նրան այժմ տեսնում եմ,
չիշում եմ ինձ այն ժամանակ, յերբ
յես առաջին աղյուսն եյի թափում :

Վո՞չ վոք չբոցոքից :

Հովնաթանը նոտեց պապի անկողնի
վրա :

Լոռություն, անստհման լոռու-
թյուն :

Ծերունին նորից նայեց Հովնաթա-

նին, հիշեց իր մահկությունը, և
սկսեց խոսել:

Յեվ նրա ձայնը բզիսում էր խաղաղ
և լուսավոր խորությունից:

— Գնաւմ եմ այս աշխարհից, հոգ-
նել եմ, զավակներս, մինչև խորը ծե-
րությունս չարիս դարձրի, տժքողջ
մարմնիցս այժմ զալիս ե կամի հոսք,
ուզում եմ, վոր վոսկորներս հոգ
դառնան և հանգստանան, կավ երի,
նորից կավ ևս դառնալու: Ինձ թա-
ղեցիք վերի ավագանի հատակում,
թող կամի շերտերը դան վրաս, իշց-
վեն, իմ մասմինն ել խառնվի այն կտ-
վին, վոր դուք պիտի զործածեք գա-
վերը շինելու: Ասում եմ ինձ թաղե-
ցիք վերի ավագանի հատակում, վոր-
պեսզի իմ կամն ել խառնվի հեղեղե-
րի բերած կավին, այդ կամից դավ
շինեք, թրծեք, դինի խմեք նրանով
և ձեր շրթունքները հպեն ինձ...

Հեկեկանքի զապված հծծյուններ
լսվեցին հարսներից:

Եերունի Անդրեասը նայեց նրանց
սպիտակած հոնքերի տակից, փորձե-
լով բարկանալ նրանց վրա, բայց մահ
վան մոտիկությունը չեր թողել նայ-
վածքի վո'չ մի խոժոռություն: Եե-
րունին զգաց, վոր այլևս չի կարող
խիստ լինելունք ե, վոր ինքը պի-
տի մեռնի և որենք ե, վոր մնացող-
ները պիտի հեկեկան, նրանց աչքե-
րի պայծառության վրա ել պիտի իջ-
նի յերբեմն մասյության քողը, վոր-
պեսզի նրանք ևս դառնան խմաստուն
և խոհական:

Եերունի Անդրեասը շարունակեց.

— Յես յերկար ապրեցի, խմեցի
հողի արյունը, այժմ ել զնում եմ հո-
ղի գիրկը, բայց լուսինը մնում ե,
արեկը մնում ե, խաղողը կաճի ու կը
շողա, խաղողի թուփի ել կչորանա,
բայց տակից նորն ե ծլում, ահա յես
չորանում եմ, բայց իմ կամից կծիլի
նորը, հովհաթանն իմ ծիլն ե, իմ
դալար ճյուղը:

Հովհաննը պլուխը թեքեց կրծքի
վրա, մույլը պատեց նրան, իսկ ծե-
րունու աչքերից անհետացավ լեռնա-
յին կապույտ լճակը, մի անիմանալի
և խորախոր անդորրություն պատեց
նրան—հանդող լույսի խաղաղությու-
նը:

Ծերունի Անդրեասը մի քիչ շունչ
քաշեց և նորից խոսեց.

— Այս կալից մի՛ հեռանաք, այս
կավը շինեց այս նոր քաղաքը, մենք
բոլորս ել կալից ենք շինված, ան-
հատնում ե կավը, անվերջ, ամեն ինչ
կավ եր և կալ պիտի դառնա: Տանս
բոլոր բանալիները ձեզ եմ հանձնել,
վոչինչ չեմ տանում հետո, գնում եմ
անձրագ: Չեմ խմանում՝ ճանապարհո-
լույս ե, թե մութ: Յերեմիա՛, վո՛ր-
դե, վերի ավաղանի թումբերն ուժե-
ղացրո՛ւ, չեղեղները դիակս չքշեն,
տանեն, միւնույնն ե, բայց թող մնա
վերի ավաղանում: Ո՞ւր և մեծ
հարսո: Յես նրան բարկացա անցյալ

որը, լավ չարավ, վոր ծամերը կըտ-
րեց, այնպիս լավ եր, յերկա՛ր և սի-
րո՛ւն:

Ծերունի Անդրեասը մարող աչքե-
րով վորսնեց մեծ հարսին, Հովհա-
նանի մորը: Մեծ հարսը մոտեցավ
ծերունուն: Ծերունին ձեռքը յերկա-
րացրեց, վոր մեծ հարսն համբուրի: Մեծ
հարսը համբուրեց պապի դող-
դոջսն ձեռքը և յերկու կաթիլ տաք
արցունք թողեց նրա հողագույն և
հողարույր դաստակի վրա:

Ծերունի Անդրեասը նայեց այդ կա-
թիլներին և ասաց.

— Զորանա, տանեմ հետո, ճրադ
չունեմ, լույս տա ճանապարհիս,
այնուհետ յերելում, վոր ճանա-
պարհու մութ ե...

Մեծ հեկեկանք բարձրացավ և
չլովեց ծերունու խոսքերի շարունա-
կությունը:

Ծերունին վերջին ճիկով ձեռքը
թափ տվեց, վոր լուն:

Հեկեկանքները խեղդվեցին կո-
կորդներում :

Եերունին շաբաւնակեց .

— Յերեմիա՛, թող վոքը հարսներո
դնան և գինի բերեն, խմեցե՛ք, մեկ-
նելուց առաջ տեսնեմ :

Փոքը հարսները գուրս վազեցին :
Քիչ անց՝ գավերը լցվեցին թանաքի
նման մուգ և թանձր գինով : Բոլորը
խմեցին : Մայրերը մատները թաթա-
խեցին գինու մեջ և քսեցին իրենց
մատղաշ յերեխաների շրթունքներին :

Եերունին հանկարծ ժպտաց :

Նրա ժպիտն այլ ևս այս աշխարհին
չեր պատկանում—ժպտում եր նա մի
նոր աշխարհի :

Հովնաթանը, վոր նստած եր պապի
անկողնի վրա և նրա ծնկները գիպ-
չում եյին իր կողին, միայն նա լսեց
պապի վերջին խոսքերը : Նա վերջին
խոսքն արտասանեց բերանն այս աշ-
խարհին, բայց նայվածքը հառած նոր
աշխարհին :

— Գնում եմ, շշնջաց ծերունին,
յավ չունեմ և վո՛չ ել...

Այլևս լսելի չեղավ նրա ձայնը :

Բոլորը վոտի կանոնեցին և դլուխ-
ները խոնարհեցին :

Յերեմիան խաչակինքեց :

Բոլորը հետեւեցին :

Խաղաղություն :

¶

Յերկար վիճաբանությունից հետո՝
Յերեմիան զիջեց մյուսներին և վորո-
շեցին թաղել պապին վո՛չ թե վերի
ավագանի հատակում, այլ գլխին : Յե-
րեմիան պնդում եր, վոր հոր խնդիր-
քը պետք ե կատարիլ :

Կեսորից հետո, փայտե դապաղի
մեջ դրած պապին իջեցրին բրուտա-
նոցը և դրին այն չարխի վրա, վորին
պատացրել եր պապը ավելի քան կես
դար : Յերբ յերկար մոմերը վառեցին
չարխի յերկու կողմերին, Յերեմիան

նշմարեց, վոր Հովնաթանը, բրուտանոցի հեռավոր անկյունում, ինչ վոր շինում և կավով: Հայրը մոտեցավ նրան.

— Ի՞նչ ես շինում, տղա՛ս, — հորցրեց Յերեմիան, դիմի չընկնելով, թի ինչ ե շինում:

— Պապի համար եմ շինում, — պատասխանեց կապուտաչյա և դանդրահեր պատանին:

Յերեմիան բռնեց նրա գլուխը և համբուրեց:

Հաջորդ որը բոլորն ողնեցին Հովնաթանին հնոց տանելու այն վիթխարի սնդուկը, վորը շինել եր նա իրենիվ սարկոֆագ: Վո՛չ Հովնաթանը և վո՛չ ել դաշտեցիները զաղափար ունեյին սարկոֆագի մասին, բայց բոլորն ել համաձայնվեցին, վոր լավ եր դնել դագաղը այդ կավե սնդուկի մեջ, վորի դրսի պատերի վրա Հովնաթանն իրենց դաշտի ծաղիկներն և պտուղներն եր քանդակել:

Այդ գիշերը թրծեցին սարկոՓագը և առավոտյան պապի դագաղը դրին մեջը:

Մեծ հարսը, Հովնաթանի մայրը, բերեց մի փարչ դինի, մի կողով ծիրան և մի փունջ վարդ և դրեց պապի սարկոՓագի մեջ, դինին՝ դագաղի դիմավերեկում, ծիրանը՝ վոտների մոտ, իսկ վարդը՝ կրծքի վրա:

Վերի ավագանի գլխին փորեցին մի խորը փոս, իջեցրին պապի սարկոՓագը մեջը:

Պապի սերունդից մի քանիսը ձայնակցեցին քահանային և տիրացուներին, յերբ նրանք յերգում եյին «Կիվերին Յերուսաղեմ»:

Մի քանի որ անց Յերեմիան և նրա յեղայլները լծեցին սայլը, վերցրին քլունդները և զնացին հին լեռը, քանդեցին լեռան կողը, դուրս բերին սպիտակ և կանաչ յերակներով քարի մի խոչոր բեկոր, տվին քարտաշին, վոր ձեղավորի իրրև շիրմաքար:

Յինչ քարտաշն աշխատում եք
սպիտակ և կանաչ յերակներով քարի
վրա, գանդրահեր և կապուտաշյա
Հովնաթանը նորից եր խաղում կավի
հետ բրուտանոցի հեռավոր անկյու-
նում :

Սկզբի որերը վո՛չ վոք չհետաքըր-
քըրվեց նրանով, այնինչ պապի բո-
լոր վորդիները, աղջիկները, հարս-
ները, թոռները և թոռան զավակնե-
րը բոլորվում եյին քարտաշի շուրջը
և դիտում նրա մուրճի յուրաքան-
չյուր հարվածը : Սպիտակ քարը փը-
շըրվում եր, թափվում գետնին և
սպիտակացնում, ինչպես դաշտի ալ-
յուրը :

Իսկ Հովնաթանը թաց, զով և կա-
պի հոտով հաղեցած բրուտանոցի հե-
ռավոր անկյունում խաղում եր կավի
մի քառսային զանգվածի հետ :

Մի որ Յերեմիան մոտեցավ իր
վորդուն :

— Ի՞նչ ես շինում :

— Նայիր, ինչի՞ յե նման, — պա-
տասխանի փոխարեն հարցրեց Հով-
նաթանը :

Հայրը յերկար դիտեց և, վո՛չ մի
բանի չնմանեցնելով, ասաց .

— Վո՛չ մի բանի նման չե, վո՛րդի :
Ծիրմաքարը վերջնականապես ձե-
վավորվեց : Քարտաշը շիրմաքարի
վրա, կանաչ յերակներից աղատ մի
կետում, քանդակել եր բացված մի
մատյան ճաշոցի մեծությամբ, վոր-
տեղ պետք և զբվեր տապանագիրը,
քանդակել եր նաև մի դինու փառչ,
զավը կողքին, խաղողի մի վողկույզ
վորթատնկի տերեներով, իսկ շիր-
մաքարն ամբողջ ձևվալորդած եր
իրրե աղյուսներով շարված մի պա-
տի մասը :

Անդրեասի անգրանիկ վորդի Յե-
րեմիան խորհուրդ արագ եր յեղ-
բայրների հետ ի՞նչ դրել այդ բաց-
ված մատյանի յերկու եջի վրա :

Յերկար խոսեցին և յերկար վիճե-

ցին, իրեկունը նստեցին և առավոտա-
յան կապտավուն լույսին բաժանվե-
ցին և չկարողացան վորեւ յեղբակա-
ցության դալ: Վերջապես վորոշեցին
կանչել դաշտի ամենահասակավոր
վարժապետին և խորհուրդ հարցնել:

Վարժապետը յեկավ, թանձր գինի
խմեց, ճավարի հետ շաղված հում
միս կերավ՝ վրան կարմիր և կծու
պիպառ ցանած՝ պատմեց թե՛ վոր-
տեղ և յե՛րբ եր առաջին անդամ հան-
դիպել լուսահողին, ի՞նչ զբույցներ
եր ունեցել նրա հետ, մինչեւ անդամ
նա հաստատապես ասաց թե՛ վո՛ր-
տեղ ե գտնվում այժմ նրա հոգին:

Յերբ վարժապետը խոսեց նրա հո-
դու մասին, բոլորը վոտի կանգնե-
ցին և խաչակնքեցին:

Ի վերջո Յերեմիան հարցրեց.

— Ի՞նչ զբենք դերեկմանաքարի
վրա:

Վարժապետը մատը տարավ քուն-

քին, մի պահ լուեց, դա նրա ժտածե-
լակերպն եր, և ասաց.

Աստ հանգչի
Առաջին բրուտը յերկրի
Անդրեաս
Ծառա Հիսուսի Քիստոսի
Վորդի Դավթի և Մարիամի

Բոլորը վոտի կանգնեցին, խոնար-
հեցին գլուխները, խաչակնքեցին
լուռ: Լովեց ծանր դուան բացվելը և
լովեց դաշտի քամու յերդը, վոր գա-
լարվում եր ծառերի, վորթատնկերի
և բարձր, մարդահասակ խոտերի
մեջ:

Քարտաշը փորագրեց որը բոլոր:
Հաջորդող կիրակին, Անդրեասի
հոգու համար մատուցված պատա-
րապից հետո, հավաքվեցին պապի
բոլոր վորդիները, աղջիկները, թոռ-
ները, թոռների դաշտակները, վերց-
րին շիրմաքարը, անցան հեղեղատը,
հանդչեցրին շիրմաքարը Դավթի և

Մարիամի վորդի Անդրեասի աճյուղն-
ների վրա:

— Ո՞ւր և Հովհաթանը, — Հարց-
րեց Յերեմիան:

— Բրուտանոցում, — պատասխա-
նեց մեծ Հարսը:

— Ի՞նչ ե շինում:

— Ո՞վ ե խմանում, — ուսերը բարձ-
րացնելով պատասխանեց մեծ Հարսը:
Բոլորը վերադարձան:

Եիրմաքարը մնաց մենակ:

Յերեմիան մտավ բրուտանոցը:

Հովհաթանը նստել եր չարխի կող-
քին, ձեռքը դրած չարխի վրա, գլ-
ւուխը կախ, հողնած և անքուն:

Հայրը մոտեցավ Հովհաթանին,
պատրաստված խստիվ կշտամբելու
պապի այն թոռանը, վորին պապն
ամենից շատն եր սիրում և վորը ներ
կա չգտնվեց նրա շիրմաքարի հանդ-
էցնելուն, բայց յերբ տեսավ չարխի
վրայի կամի զանդվածը, աղջահար
կանու տռառվ:

Կավն արդեն ձեւ եր ստացել և վո-
րոշ չափով նմանվում եր պապին:

— Հովհաթան... բացականչեց Յե-
րեմիան:

Հովհաթանը բարձրացրեց գանգ-
րահեր գլուխը և ժպտաց կապույտ և
հողնած աչքերով:

— Հայրի՛կ, — կերկերաց Հովհա-
թանը, — ուղում եմ, վոր պապն ապ-
րի:

— Պապի վորդ արել քեզ լինի,
վո՞րդի, — շշնջաց պապի անդրանիկ
վորդին:

Յերեմիան դիտեց իր հոր վակված
աչքերը, ինչպես մեռած որը, գիտեց
նրա յերկար և խստ հոնքերը, յերկար
մազերը, բաց և լայն ճակատը,
կուրծքը ծածկող միրուքը և մի ձեռ-
քը, ուսած յերակներով, վոր անկախ
թեփից, հանգչում եր կրծքի վրա:

— Հովհաթան... նորից բացական
չեց աղջահար հայրը, զո՞ւ շինեցիր:

— Այո՛, — պատասխանեց Հովհան-
թանը և ժպատաց կապույտ աչքերով:

Առաջին անգամ իր կյանքում Անդ-
րեասի վորդի Յերեմիան անդրադար-
ձավ կավի այդքան աղնիվ ողաս-
կործման: Նա յերբեք չեր մտածել,
վոր կավը, բացի թասերից, գավե-
րից, փարչերից և աղյուսներից, կա-
րելի յեր ողազործել և անմահու-
թյան համար:

Յերեմիան, իբրև արձան, միայն
տեսել եր Քրիստոսի խաչելությունը:
— Ի՞նչ անենք այս...

Յերեմիան կանդ առալ, չկարողա-
ցալ խոսքը վերջացնել, վորովհետեւ
մինչև անդամ չիմացավ, թէ ի՞նչ ա-
նուն պետք և տալ, վո՛չ աման եր,
վո՛չ դավ և վո՛չ ել կուժ:

— Արձանը, — ասաց Հովհանա-
նը:

— Այո՛, արձանը, — շնչաց Յերե-
միան:

— Տանե՛նք և թրծե՛նք:

Եեվ հայր ու վորդի տարին կավը՝
դրին հնոցի մեջ և գիշերը բոլոր վա-
սեցին հնոցը:

Վո՛չ մի կիրակի իրիկուն հնոցը չեր
վառվել: Յերբ ծուխն սմալի նման
բարձրացավ, բոլորը զարմացան:

Առավոտյան նրանք վերադան
տուն և քնեցին:

Նրանք զարթեցին միջորեյին,
զարթեցին և վաղեցին հնոցը, բարձ-
րացան պատերի վրա, հնոցը դեռ
տաք եր, բայց տեսան, վոր պապի
կավը թրծվել եր, կարմրել, ինչպես
յեփած ձակնողեղը:

— Թո՛ղ մնա, մինչև իրիկնային քա-
մին բարձրանա և սառեցնի, — ասաց
հայրը:

— Թո՛ղ մնա, — ասաց վորդին:

Յերեկոյան, յերբ քամին բարձրա-
ցավ և սառեցրեց հնոցը, նրանք դուրս
հանեցին կիսանդրին և դիտեցին:

Հովհանաթանը տեսավ և տիրեց, նրա
հոգին կարծես մուտք գործեց զեպի

գեշերը, իսկ Յերեմիան ուրախ եր,
վորովհետեւ վոչինչ չնկատեց, նա
միայն հափշտակվեց հորը մեծ ճա-
կատով, խիտ հոնքերով և կուրծքը
ծածկող միբռւքով։

Կիսանդրին մի քիչ այլանդակվել
եր՝ թաց-թաց թրծելու պատճառով։

Հաջորդ կերակին նորից հավաք-
վեցին պապի բոլոր վորդիները, աղ-
ջիկները, թոռները, թոռան զավակ-
ները, հարսներն ու փեսաները, դրիհ-
ցին պապի կիսանդրին, անցան հեղի-
դատը և դրին այն սպիտակ և կանաչ
յերակներով շիրմաքարի գլխավերե-
վը։

Յեվ դաշտեցիները բոլոր, դարձա-
ցած և հիացած, դնում եյին խումբ-
խումբ տեսնելու կիսանդրին, տես-
նում եյին և կարդում տապանակի-
րը։

ԱՆԴՐԵԱՍ
ՎՈՐԴԻ ԴԱՎԹԻ ՅԵՎ ՄԱՐԻԱՄԻ

Ճ

Թե վո' բուեղից և ի'նչպես Հովնա-
թանը սովորել եր քանդակել՝ բոլորի
համար մնաց դաղտնիք, բայց Հովնա-
թանը յերկար եր աշխատել, բոլորից
դաղտնի, հափշտակությամբ և ներ-
քին անխմանալի մղումով։

Նա տեսել եր յեկեղեցում Քրիստո-
սի խաչելության արձանը, տեսել եր
հրեշտակների արձաններ թելերով և
սեռի, փոքրիկ, վարդի կոկոնի նման
թարմ նշաններով, տեսել եր նաև լի-
ռան քաղաքի հին ամրոցում կոտրը-
տված արձաններ, յերեմին զլուխ-
ներ՝ տանց մարմնի, յերբեմն մար-
միններ՝ առանց գլխի, վարոնք բո-
լորն ել համաքվել եյին մի մութ
սենյակում։ Կային արձաններ և ամ-
րոցի պատերի և պարիսպների վրա,
բարձր, ելի կոտրտված, աղճատված
վիճակում։

Յեվ ամեն անդամ, յերբ Հովնա-

թանը տեսել եր այդ բեկորները նրա
մանկական հոգին խայտաշել եր խորը
ուրախությամբ, այդ խայտանքին
չաջորդել եր ներքին, թաղուն մի
դող, վորն սկիզբն եր ստեղծադրծու-
թյան և վորին բոլորովին անծանոթ
եր նրա դիտակցությունը:

Յեզ բրուտանոցում, բոլորից ըս-
տարձակապես դաշտնի, Հովնաթանը
շինել եր ձեռքեր, գլուխներ, վոռո-
ներ, վոքը, շատ փոքը մեծությամբ ե-
չեր համարձակվել ցույց տալ հռչը
կամ հօր յեղբայրներին, մինչեվ ան-
դամ ցույց չեր տվել պապին, վորն
իրեն այնքան սիրում եր, վորն իրեն
անպայման կքաջալերեր անսահման
չափով: Բացի մարմնի այս մասե-
րից՝ նա կավից սարքել եր մի փոք-
րիկ սայլ, ճիշտ նման իրենց սայ-
լին զույգ յեղներով: Հովնաթանը
քանդակել եր նաև զանազան տեսակի
պտուղներ, տերեներ, քանդակել եր
Քրիստոսը խաչի վրա:

Յեզ ահա պատանի Հովնաթանը,
ցնցված պապի մահվամբ, տողորված
նրան անմահացնելու բուռն տենչով,
հանդպնեց քանդակել և նրա կիսանդր-
ին:

Պապի կիսանդրից հետո՝ Հովնա-
թանն սկսեց զբաղվել արձաններ
մինելով այլևս համարձակորեն:

Նա չեր տեսել վո՛չ մի վար-
պետի ձեռք, նա չեր լսել վո՛չ մի
վարպետի հրահանդ: Նա մինչև ան-
դամ կարծում եր, վոր վո՛չ վոք աշ
խարհում կավից արձաններ չեր շի-
նել, այլ շինել եյին ուղղակի քա-
րից կամ բրոնզից և վոր կավից
արձաններ քանդակելու գյուտը
բացարձակապես պատկանում եր
իրեն, վորովհետեւ նա չեր տեսել
արձանի ստեղծման վո՛չ մի պրոցես:
Ահա քարտաշն ել շիրմաքարը ձե-
վալորեց ուղիղ քարից:

Անմերջ քանդակելով՝ Հովնա-
թանն ըմբռնեց մարմնի ձևերը, հա-

սարակ աչքերով՝ աննշմարելի խո-
րությունները, բարձունքները և
ծավալները:

Պատի կիսանդրիից հետո՝ հայրն
սկսեց ուշի ուշով հետեւել վորդու-
աշխատանքներին, նրա ամենա-
փոքրիկ փորձերը խորը հրճվան-
քավ եյին լցնում նրան, բայց միա-
ժամանակ մտածում եր. «Հովնա-
թանը յեղավ տասնեռութը տարե-
կան, յես և յեղբայրներս հոգնած
ենք, լավ կլիներ Հովնաթանն անց-
ներ չարիսի դլուխը, շիներ կուժեր,
թասեր, զավեր և փարչեր»:

Մտածում եր Յերեմիան, բայց վո-
չինչ չեր ասում Հովնաթանին, թող
նելով, վոր նա անի, ինչ սիրու կու-
զի: «Դեռ ուժ կա վսոկորներիս
մեջ, գեռես կարող եմ աշխատել», —
ասում եր նա:

Բայց հորեղբայրները, վորոնց
վորդիները կամն եյին արորում բո-
րիկ վոտներով, հնոցն եյին վասում,
ավագաններից կամն եյին բարձ-

րացնում սայլերը, մեջքերով ակ-
յուսները կրում՝ բողոքում եյին,
վոր Հովնաթանը դատարկ բաներով
և զբաղվում և չի աշխատում, վո-
րովհետեւ բրուտանոցը և վող բրու-
տային առելտուրը պատկանում եր
բոլորին:

— Յերեմիա — ասում եյին յեղ-
բայրները, — վորդիք անպետք ե,
դլուխ շինելը ո՞ւմ փորը կը կշտաց-
նի, աշխատել ե հարկավոր, թո՞ղ
անցնի չարիսի դլուխը:

Յերեմիան չեր կարող ասել, վոր
Հովնաթանը անկարող ե աշխատելու
չարիսի վրա, վորովհետեւ նա յեր-
բեմն պտտեցնում եր պապի չարիսի
և հիանալի անոթներ շինում:

Յերը բողոքները շատացան, և
յերը Հովնաթանը ակսավ հորը խեղ-
ճացած այդ բողոքներից՝ անցավ
պապի չարիսի դլուխը և նրա մատ-
ների տակ լցրծուն կավն ստացալ
ոքանչելի ձեվեր: Նրա շինած անոթ

ները բոլորովին այլ ձեզ ումնեյին
մյուսների շինածներից, նրա անոթ-
ներից յուրաքանչյուրն ել տարբեր-
վում եր մյուսից, նա չեր կրկնում
վոչ մի ձեզ, բայց յերկար չեր տե-
վում, ձանձրանում եր, թողնում
չարխը, քաշվում բրուտանոցի հեռա-
վոր մի անկյունը և սկսում կառու-
ցել մի զայրացած բռունցք, վոր
ցցվում եր գուրս կավի քառսային
դանդվածից, մի կուցած և հոգնած
մեջք, մի զլուխ, և այլն:

Նրա կերտած դլուխները նման ե-
յին և գլխին, վորովհետեւ գլխի
ձեզը վերցնում եր նա միայն իր գըլ
խից, վորը դիտում եր մի կոտրած
հայելուց:

Քանի Հովնաթանի շինած անոթ-
ները հարդ եյին ստանում շուկայում,
հորեղբայրներն այնքան բարձրաց-
նում եյին բողոքը և պահանջում ե-
յին, վոր Հովնաթանը չարխի վրա
վոչ թե պատահարար աշխատի, այլ

արեվածագից մինչեւ արեվամուտը :
Բողոքում եյին և հորեղբայրիոր-
դիները :

— Հովնաթանը վերի արտի ցորե՞ն
ե, ի՞նչ ե, մենք եւ ենք, իսկ նա ձի՞
յե, ի՞նչ ե :

Բողոքները դառնում եյին անտա-
նելի, մանավանդ յերբ սկավում եր
քաղաքում կառուցումների շրջանը :

— Աղյուս են ուզում, Յերեմիա,
ասում եր յեղբայրներից մեկը,—
իսկ Հովնաթանը չի աշխատում, ա-
վելի լավ և իրարից բաժանվենք,
մենք՝ մերը, դուք՝ ձերը, յեղբայրն
եւի յեղբայր :

Յերեմիան բռնում եր Հովնաթանի
դլուխը, աչքերը ձգում նրա աչքերի
կապույտ լճակի մեջ և ասում .

— Հովնաթա՞ն, վո՞րդի, աղյուս են
պահանջում :

Յեվ Հովնաթանը, հուսահօտ և տը-
խուր, վերցնում եր փայտէ նախնա-
կան քառակութեաի շրջանակը, բորբիկա-

նում և արեվածագից մինչեւ արևամայր աղյուս թափում :

Յերեկոյան յերբ բոլորը ուստում ենին թանե սպասը և վեր կենում ,պառ կում , քնում , Հովնաթանը , կառւրի վրա պառկած իրիկնային հովից զովացած անկողնում , աչքերը հասում եր սպառպաջուն յերկնքից կաթող սատղերին , աչքերը լցվում եյին արցունքով :

Մայրը մստենում եր վորդուն ,տես նում նրա արցունքը , շոյում եր ուլուխը և հարցնում .

— Հովնաթա՛ն , մատա՛ղ , ի՞նչո՞ւ յիս լաց լինում :

Հովնաթանը պատասխանում եր , ի՞նչպես հինգ տարեկան մանուկը .

— Յես աղյուս չեմ թափի :

— Հայրդ ծեր ե , վորդի , նրան ուրատական ես ողնել :

Հովնաթանը նայում եր դեռ յերետասարդ մորը լուռ և տիտուր :

Յեվ մայրը շիոթում եր կապույտ

աչքերի արցունքը կապույտ յերկնքի ասողի հետ :

Սառչում եյին արցունքները , ինչպես մարած սատղերը , քունն իշնում եր Հովնաթանի հողնած մարմնի վրա , մայրը հեռանում եր , համբուրելով արեվից յեփած նրա ճակատը :

Առավոտյան Հովնաթանը վեր եր թռչում անկողնուց , յերբ դեռ լուսատղն եր շողում յերկնքում , ինչպես մարգարիտը փիրուզյա Փոնի վրա , վազում եր բրուտանոց և սկսում եր սեփական աշխատանքը :

Կավի զովությունը խնդությամբ եր վասում նրա արյունը :

Հայրը դալիս եր բրուտանոց , մոտենում Հովնաթանին և դիտում նրա աշխատանքը : Ահա մի ձեռք , վոր դուրս եր ցցվել կավի մութ զանդվածից , յերկու յերեք անգամ ավելի խոչը , քան բնական մեծությունը՝ ուռած յերակներով : Հայրը կարդում եր այդ ձեռքի վրա կես գարու չափ Փի-

զիքական աշխատանք կատարող մի
մարդու վողջ կենսագրությունը,
պատկերացնում եր քամուց և արեվից
այրած նրա ճակատը, կոպտացած և
կուցած նրա մեջքը: Հայրը գլուխն ո
րորում եր ներքին հրճվանքով և միա-
ժամանակ խորը տարակուսանքով,
նա զգում եր, վոր վորդու աշխատան-
քը մի բան և, բայց ի՞նչ բան և, չեր
կարողանում ասել: Մի ժպիտ, հեղա-
սահ առվակի նման, գալիս, տարած-
վում եր նրա գեմքի վրա և ինչ վոր
լուսավոր մի ալիք հոսում եր, նույն-
պէս հեղասահ առվակի նման, նրա
հոգու մթության մեջ:

Բայց յերր բրուտանոց Եյխն լցվում
Հորեղբայրներն ու Հորեղբարվորդի-
ները և խոժոռ նայվածքներ Եյխն նւ-
տում Հովնաթանին նա շորով փո-
թաթում եր աշխատանքը, թողնում,
հոտենում պատի չարխին, վոր այլևս
իրեն եր պատկանում: Զարխը դառ-
նում եր աշխույժ, Հովնաթանի մաս-

ների տոկ կամն ստանում եր նորա-
նոր և ապշեցուցիչ ձևեր:

Բայց Հովնաթանին այլում եր մարմ
նի ձևերի այլաղան դադմնիքները:
Գիշերները նա մտնում եր բրուտանո-
ցը: Վոչ վոք չկար: Բայց Հովնաթա-
նին թվում եր, վոր չնշում և կավը:
Մերկանում եր, վառում մոմը և մո-
մի որսրուն լույսով դիտում իր մար-
մինը և ահսնում եր, վոր մարմնի վոչ
մի կետը չի սառչում, այլ անվերջ փո-
փոխվում և, խորությունների և բարձ
րությունների անհուն մի յելեվեծ,
բայց յերբ միենանույն մոմի լույսով դի-
տում եր իր ձեակերպած մարմնի մի
մասը, գանում եր, վոր զոյսւ-
թյուն չունի կենդանի մարմնը, ին-
քը ձեավորել եր մարմնի ընդհանուր
յերեսույթը:

Յերիտասարդ բրուտր, վոր ձգտում
եր քանդակագործ դառնալու, վո՛չ մի
դաղավար չուներ մողելի մասին.
բայց զգում եր, վոր յեթե մեկը լին

և նրանից վերցնի մարմնի ձեզերը՝
ավելի ճիշտ կը լինի: Մարմնի մասե-
րը նա քանդակում եր իր մարմնից՝
հայելու մեջ նայելով և Հովնաթանն
զգում եր, վոր դա բավարար չեր:

ԺԱ

Յեվ Հովնաթանը յերկար և չարչա-
րալից յերեվակայությունից հետո՝
ինչպես մթնում պայծառացող տե-
սելը, դատավ առկայծող ճրագը:

Մի յերեկո, կտուրի վրա, մաքուր
յերկնքի տակ, այն ժամին յերբ մա-
նուկները պառկած զով և սպիտակ
անկողիններում մի աստղ են մտքե-
րում պահում, վոր մյուսները զըստ-
նեն, Հովնաթանը մոռեցավ իր փոք-
րիկ յեղբորը, շոյց նրա դլուխը, վոր
նույնպես գանգրահեր եր և ասաց.

— Ամենաշատը ի՞նչ ես սիրում,
Դավիթ:

— Զի, — պատասխանեց Դավիթը:
— Վաղը քեզ ձի նստացնեմ:

Դավիթը թողեց աստղերի խաղը,
վաթաթվեց պինդ մկաններով իր յեղ-
րորը խելահեղ ուրախությամբ:

— Բայց առավոտյան կանուխ պի-
տի զարթնես, մի բան պիտի ասեմ,
անես, կեսորին քեզ ձի կնստացնեմ:

— Կղարթնեմ, — խոստացավ Դա-
վիթը:

Գիշերը, յերբ աստղերը կախվե-
ցին յերկը կտուրների և ծառերի
վրա, իրենք արեվի փշուրներ, որոր-
վեց Դավիթը ձի նստելու յերազով և
մանկական ջինջ յերազում լսեց ձիու
վրջյունը:

Առավոտյան, յերբ Հովնաթանը
զարթեցրեց Դավիթին, կապույտ լույս
եր, առավոտյան սղոխն որորում եր
տերեւիները, վոչ մի շան հաջող,
միայն լսելի եր բնության չնչումը:

Հովնաթանը բաց արավ բրուտանո-
ցի ծանր դուռը: Մտան ներս:

— Զին այստեղ ե, — հարցրեց Դա-
վիթը:

— Վո՞չ, — ասաց Հովնաթանը և
ժպտաց յեղբոր միամտության վրա:

— Ապա վո՞րտեղ ե:

Հովնաթանը, առանց սկասասխա-
նելու, գնաց, կավ բերեց, դարսեց ի-
րար վրա բրուտանոցի հեռավոր ան-
կյունում դրված իր կավակալի վրա:

— Դավիթ, — ասաց Հովնաթանը,

— յես ուզում եմ քեզ քանդակել, շո-
սերդ հանիր և այստեղ կանգնիր:

Դավիթին իսկույն հնագանդվեց:

Հովնաթանն սկսեց քանդակել: Ա-
ռաջին անդամն եր, վոր մարդու մարմ-
նի կենդանի ձերը հայտնաբերվում
եյին իր աչքերի առաջ: Քանդակում
եր նա արտգ և հափշտակված:

Դավիթը, մերկ և անշարժ, մըր-
սում եր բրուտանոցի ցուրտ խոնա-
վությունից, բայց Հովնաթանը չեր
զգում այդ: Դավիթն ինքն ել չեր
անդրադառնում, վորովհետեւ ապշա-
հար և գմայլագին դիտում եր ձեւ-
վորվող կավը:

Հանկարծ բաղխվեց բրուտանոցի
դուռը:

— Հագի՞ր, — ասաց Հովնաթանը և
ինքը թաց չորով ծածկեց կավը և բաց
արավ դուռը:

Ներս մտան հայրը և հորեղբայրնե-
րը: Յերեմիան զարմացավ, տեսնե-
լով Դավիթին բրուտանոցում բրուտ-
ներից առաջ:

— Ինչո՞ւ յես յեկել, — հարցը ց
հայրը:

— Զի պիտի նստեմ, — պատասխա-
նեց Դավիթը կերկերուն ձայնով, վո-
րեվհետեւ զեռես դոզում եր նրա ծնո-
ւը ցուրտ խոնավությունից:

Հովնաթանը կատարեց խոսուումը:

Կեսորին նստեց նա ձին, կուշավ,
բռնեց Դավիթի թելից, բարձրացրեց,
նստեցրեց իր առաջը, պինդ գրկեց և
իթանեց ասպանդակներով: Զին թր-
ուավ աշնան վարած արտերով, վոր
կարմիր եր փիրուն և հոտավետ:

Դավիթին թվաց, վոր իր լսած հե-

Քյաթներից մեկումն ե, ահա հեքյա-
թի նժույգը, ինքը վրան, թեվերը
բացած, կուրծքն ուռած քամուց,
կայծակնարիր աչքերով, սլանում ե և
ահա կհասնեն ամպերին, կմխրճեն ի
ըենց գլուխներն ամպերի սպիտակ
կույտերի մեջ:

Յեվ ամեն առավոտ, կապտավուն
լույսին, Հովնաթանը և Դավիթը բաց
ելին անում բրուտանոցի ծանր դու-
ռը, մտնում ներս և սկսում աշխա-
տանքը:

Բարձրանում եր և հետզհետե ձետ-
վորվում մի հասակ, առույդ և թե-
թեվ:

Վերջին որը, յերբ Յերեմիան տե-
սավ մանկան արձանը, իր սեփական
մանկան, սեփական վորդու ձեռքով
կերտված, նայեց Հովնաթանին և աչ-
քերը լցվեցին արցունքով: Յերկար
ժամանակ եր նրա աչքերը, այրած
արեվից, քամուց և հնոցի բոցից, չեր
զովացել այսպիսի արցունքներով:

Վաստակավոր բրուտին թվաց, վոր
վերադարձան իր յերիտասարդու-
թյան որերը, նրա ոնդունքները լայնա-
ցան կավի հին և զգլիսող բույրից:
Հովնաթանը չհասկացավ հոր ար-
ցունքների իմաստը:

— Ինչո՞ւ յես լաց լինում, հա՛յր, —
հարցը եց:

Անդրեասի վորդին չսպատասիանեց,
դիտեց Հովնաթանի հասակը և որո-
րեց գլուխը:

— Հավատ չունես, հա՛յր — ասաց
Հովնաթանը:

— Հավատ ունեմ, վո՛րդի, դրա հա-
մար ել լաց եմ լինում:

Հովնաթանը հասկացավ հոր ար-
ցունքների իմաստը և փաթաթվեց
նրա վզովը:

Դավիթը վոչինչ չեր հասկանում,
նա միայն դիտում եր իրեն կավի
մեջ, աչքերը հառելով իր արության
կոկոնին, վոր շուտով պիտի ծաղկեր
և պտուղ պիտի տար:

Գարունը յերկար եր տեսում, բայց
ամառը վրա յեր հասնում հանկար-
ծակի, մեկ որից մյուսը դաշտում
շարժվում եր ողն ալիք-ալիք, շնե-
րը, շվարի տակ անդամ, լեզուները
ձգում եյին դուրս և հետով շնչում,
ծառերի և խոտի կանաչը մուգանում
եր, կարծես արեվը մոտիկանում եր
յերկրին:

Յեվ մի որ, ամառովա սկզբներում,
միջորեյի կիզիչ արեվի տակ, Հով-
նաթանը տեսավ իր քրոջը, Մարդա-
րիտին, վոր լողանում եր վերի ավա-
զանում, վորի գլխավերեվում հանգ-
ում եր պապը:

Մարդարիտը 16 տարեկան եր, իրե-
նից մի քանի տարով փոքր: Հովնա-
թանը և Մարդարիտը, այդ միենույն
ավաղանում, միասին շատ անդամ ե-
յին լողացել, բայց վերջին տարիները
բաժանվել եյին իրարից բնագործեն:

Ավաղանի ջուրը զուլալ եր, ջինջ,
ինչպես արցունքը, նրա ալիքների
տակ շողշողում եր Մարդարիտի մար-
մինը, ինչպես լուսնի ցոլքը:

Մարդարիտը, տեսնելով յեղորն
ավաղանի թմբի վրա, ամոթից սուղ-
վեց ջրի մեջ, բայց, յերկար չոիմանա
լով, բարձրացավ վեր, կուչ յեկավ
ջրի մեջ, ձեռքերով անդադար խփե-
լով ջրին, վորպեսզի չսուլպի: Հով-
նաթանը չեր հեռանում, ապշահար
կանզնել եր նա թմբի վրա:

— Հովնաթա'ն, գնա՛ հեռացի՛ր:
Հովնաթանը հեռացավ:

Նա գնաց, հասավ դաշտի մեծ խո-
տերին, նստեց նրանց յետեվում և
այնպես արավ, վոր չտեսնի քրոջը:
Խոտն որորվում եր կեսորվա մեղմ և
քաղցրաբույր քամուց, դպչում նրա
մազերին և յերեսին:

Հովնաթանն սկսեց մտածել— Մար-
դարիտն այն աղջիկը չեր, վորի հետ
այնքան լողացել եր: Նա փոխվել եր

բոլորովին։ Մանկությունից վոչինչ
չեր մնացել, կարծես մի ոտար, ան-
ծանոթ աղջիկ եր, վոր պատահաբար
ընկել եր իրենց ավաղանը։ Նրա ըս-
տինքները, դողահար ջրի զովությու-
նից, կարծես թռչում եյին ջրեց
դուրս, մարմինը լցվել եր, կլորա-
ցել, վոսկորների վոչ մի հետք չեր
յերեւվում։

Յեվ Հովնաթանը մտադրեց քանդա-
կել քրոջը։

Արդյո՞ք կհամաձայներ Մարգարի-
տը։ Այո՛։ Մարգարիտը յեղբորը վո-
չինչ չեր մերժի։ Յեվ բոցավառվեց
Հովնաթանի յերեվակայությունը,
նրան պատեց ստեղծագործության մի
նոր և անորինակ դող, մի աննախըն-
թաց սարսուռ։

Հանկարծ լսեց ջինջ և զիլ մի ձայն։
— Հովնաթա՞ն... Հովնաթա՞ն...

Հովնաթանը գլուխը բարձրացրեց
խոտերի միջից և տեսավ քրոջը, վորը
յեղնիկի թեթևությամբ վաղում եր

իրեն։ Հովնաթանն ընդառաջեց նրան
և նրանք դիրկընդիմառնվեցին։

— Մարգարիտ, — շշնջաց Հովնա-
թանը, — արի՛, քեզ տանեմ բրուտա-
նոցը և մի բան ցույց տամ։

Մարգարիտը բռնեց իր գանգրահեր
և կապուտաչյա յեղբոր ձեռքը և նը-
րանք քայլեցին ղեպի բրուտանոցը։

Մարգարիտի մազերից քամվում եր
ջուրը, գալիս հասնում եր ծամերի
ծայրին, կախվում, ինչպես ցողը խո-
տից և տերեվից, և կաթում կրծքի և
ուսերի վրա։

Յերբ նրանք բրուտանոց հասան,
վոչ վոք չկար, բանթող եր, վորով-
հետեւ զողանջում եր մատուռի իրիկ-
նային զանգը։

Բացվեց բրուտանոցի ծանր դուռը։
Մարգարիտը դողդոջուն քայլերով
մտավ ներս։ Նա զողում եր և իրիկնա
յին զովությունից, և՛ ինչ վոր անծա-
նոթ վախսից։

Բրուտանոցի դուռը բացաձ ժամա-

նակ՝ Մարգարիտը նայեց յեղբոր աշ-
քերին և նրան թվաց, վոր յերկու փռք
ըիկ կանթեղներ են վառվում նրա սե-
և խիտ հոնքերի տակից :

Յերբ նրանք կանդնեցին Դավիթի
սքողված արձանի դիմաց, Մարգա-
րիտը շշնջաց .

— Հովնաթա՞ն, վախենում եմ :

— Ինչո՞ւ :

— Զեմ իմանում :

Հովնաթանը ժպտաց :

Այս ժպիտը սրտապնդեց տասն և
վեց տարեկան աղջկան : Տասն և վեց
տարեկան աղջիկը վո՞չ կին ե, վո՞չ
աղջկէ : Այդ տարիքի աղջկա ներքին
եյտթյունը տարտամ ե, անորոշ ըդ-
դացումների մեջ տարուբեր, մեկ՝
կին ե, մեկ՝ աղջիկ : Ահա լսում ե նա
մի ձայն, դյութիչ մի ձայն, բայց չի
իմանում թե վո՞րտեղից յեկավ, կար
ծես մեկը դպչում ե իրեն, ընդուստ
յետել ե դառնում, խոռվաճույզ և
սրտատրոփ, վոչ վոք չկա, արդյոք

քամի՞ն եր, վոր թափահարեց և ան-
ցավ : Դա մի անիմանալի խաղ ե, վոր
շարունակվում ե, մինչև աշխարհը
մերկանա նրա առաջ, մինչեվ պատրո-
վի թանձր քողը, մինչեվ ծագի կյան-
քի արեղակը և արյունախինդ սրերով
պատառութի այն մութ գիշերը, վոր
արհավրալից բարձրանում ե յուրա-
քանչյուր աղջկա հոգու և սրտի դի-
մաց :

Հովնաթանը քաշեց շորը կամի վրա
յից : Մարգարիտը ճչաց և վաթաթա-
վեց յեղբորը :

— Դավիթն ե :

— Այո՛, Դավիթն ե :

Հովնաթանը նրան պտտացրեց ար-
ձանի բոլորտիքը և դիտեց քրոջ հե-
տըգետե պայծառացող աչքերը : Նրա
վախի տեղատվության հաջորդեց ու-
րախության և վսահանության մի բար
ձըր մակընթացություն :

— Մարգարի՛տ, ուզում եմ քե՛զ ել
քանդակել :

— Այսպե՞ս :
— Այո՛, ա'յսպես :
— Հայրիկը, մայրիկը... շնչացլն
քրոջ վարդագույն շրթունքները :
— Վո՛չ վոք չի տեսնի, առավոտնե-
րը, աշխատանքից առաջ, կիրակի
որերը, հետո դու իմ քույրն ես :
— Դու իմ յեղբայրն ես,— ասաց
Մարդարիտը և դրկեց յեղքորը :

Յերբ Հովնաթանը փակեց բրուտա-
նոցի ծանր դուռը՝ արեղակի վերջին
շողերը հեռանում եյին դաշտի բարձ-
րաբերձ ծառերի գաղաթներից, կը-
տուրների կարմիր կղմինդրներից,
իսկ արեվմտյան յերկնքից մաղվում
եր անթեղված կրակների մանի
շակադույն մոխիրը :

ԺԲ

— Յերկու որ ել և կը վերջացնեմ
քո արձանը, Մարդարիտ,— ասաց
Հովնաթանը և շորը քաշեց կավի

վրա : Նրան թվաց, վոր լուսինը փա-
թաթեց ցեխոստ փալասի մեջ :
Նրանք դուրս յեկան բրուտանոցից :
Քիչ անց՝ Յերեմիան յեկավ բրու-
տանոցը, թեև կիրակի եր և աշխա-
տանքի որ չեր, նա մոռացել եր ջրել
կավի մի խոշոր կույտ, վորը հարկա-
վոր եր առավոտյան աշխատանքի
համար :

Յերբ Յերեմիան ջրեց կավը և ծած-
կեց մեծ և թաց սավանով, ցանկա-
ցավ նորից տեսնել իր փոքրիկ Դավ-
թի արձանը : Նա շորը քաշեց ար-
ձանի վրայից և մի պահ ասլշահար
կանգ առավ : Ո՞վ եր այն անամոթ
աղջիկը, վոր մերկացել եր իր վորդու-
առաջ և թույլ եր տվել նրան, վոր
որերով դիտեր իր մարմնի յուրաքան
չյուր ծալքը :

«Թերեւս յերեակայությամբ ե քան-
դակել», մտածեց Յերեմիան, բայց
վո՛չ, այնքան կենդանի եր իր աչքերի
տռաջ բարձրացած մերկ մարմինը :

Նա դարձավ դեմքի կողմը և հանկարծ ճանաչեց անամոթ աղջկան : Արյունը վայրկենապես խուժեց Յերեմիայի դլուխը, նրա դեմքը և ականջները կարմրեցին, աչքերը կարծես պատրաստ ելին արյուն կաթելու, իսկ մարմինն ամբողջ դողում եր դայրույթից :

Յեվ հանկարծ ամեն ինչ մշուշվեց նրա աչքերի առաջ և ձեռքերը, ինչպես զոհի վրա հարձակվող վոճրագործի ձեռքերը, շարժվեցին կատաղությամբ : Մի հարվածով այսանդակեց գլուխը, սեղմեց կրծքերը և տափակացրեց, կոտրեց թևիրը և թեփերի կավով ծածկեց իր անամոթ աղջկա մերկությունը, տրորեց մարմնի բոլոր մասերը, վերածեց ամեն ինչ քառոսային դանդվածի, տպա վախթեց չորով և սկսեց քայլել դեպի դուռը : Զեռքը յերկարեց դուան՝ բաց անելու՝ բայց հանկարծ սկսեց լաց լինել մանուկի նման : Նա դողում եր,

վոր խորտակել եր մի ամբողջ կյանք, բայց զգում եր նաև թէ ինչո՞ւ չկարողացավ զսպել իրեն :

Յերբ յեղբայրները մտան բրուտանոցը, դտան Յերեմիային տխուր և մռայլ, կարծես նրա աչքերի առաջ դըր ված լիներ իր մի թանկագին հարազատի դադաղը :

— Յերեմիա՛, ինչո՞ւ տխուր ես, — հարցըց յեղբայրներից մեկը :

— Տխուր չեմ, շատ ուրախ եմ, — ասաց Յերեմիան և ցալագին ժըպատաց :

Ապա նա վեր կացավ և մոտեցավ չարխին, վոտներն սկսեցին շարժվել համաշափութմով, ինչպես կես դարուց ավելի : Մի քանի անոթ ձեւավորելուց հետո՝ նայեց պապի չարխին և տեսավ Հովհաննեանին, վոր աշխատում եր, շինում եր բարձր մի ջրաման, վոր շատ նման եր մարդկային հասակի : Յերեմիայի ձեռքերը թուլացան՝ տեսնելով Հովհաննեանի անդոր

բությունը և անդիտակցությունը կա
տարված վոճրի:

Բանթողին Հովնաթանը մոտեցավ
հորը, միամիտ և անդիտակ, բայց հայ
ըլ չկարողացավ նայել վորդու աչքե-
րին:

Հաջորդ առավոտյան Հովնաթանը
և Մարգարիտը սողոսկեցին բրուտա-
նոցը:

Հովնաթանը բաց արավ շորը և ճը-
չալով գրկեց արձանի ծամածոված
վոտները, ճակատը հանդչեցնելով
թաց կալին:

Մարգարիտը վաղեց դեպի յեղբայ-
րը, բռնեց նրա գլուխը, սեղմեց կրծ-
քին և հարցրեց.

— Ո՞վ ե արել:

— Հայրիկը, — շնչաց Հովնաթա-
նը և թափեց արցունքները կավի
վրա:

Լոռության մեջ լսվում եր յեղբոր և
քրոջ հեկեկանքը:

— Գնա՛ տուն, — ասաց Հովնաթա-
նը քրոջը:

Մարգարիտն սկսեց քայլել գոգնո-
ցով սրբելով արցունքները:

Հանկարծ Հովնաթանը կանչեց.

— Մարգարիտ:

Քույրը յետ դարձավ:

— Ել քեզ չեմ տեսնելու, մնաս բա-
րով:

— Հովնաթա՛ն, — հեկեկաց Մար-
գարիտը:

— Համբուրիր Դավթին և մայրի-
կին:

Մարգարիտն չուպեց տուն, զգու-
շանալով, վոր հայրը չտեսնի իրեն:

Հովնաթանը վեր կացավ, դանդա-
չյունով քայլեց դեպի դուռը,
նստեց դռան յետելը, գլուխն առնելով
յերկու ձեռքերի մեջ:

Բացվեց բրուտանոցի դուռը:

Հովնաթանը գլուխը բարձրացրեց և
տեսավ հորը: Հայրը վոչինչ չասաց
և քայլեց դեպի չարխը: Հովնաթան
նը ձայնեց.

— Հայրի՞կ . . .

Յերեմիան կանգ առաջ :

— Յես դնում եմ ոտար յերկիր , —
ասաց Հովհանքանը վոտի կանգնելով :

— Գնաւ , ինչ հարկավոր չե անսա-
մոթ վորդի , — կարձ կտրեց Յերե-
միան :

Հովնաթանը քայլեց լուրս :

Յերեմիան մոռեցավ չարխին , դրեց
կալին առաջը , նստեց , բայց վոտը
չչարժվեց , մատները կապարացան :
Նրան ահավոր կերպով մտահողում
եր դանդրահեր և կապուտաչյա վոր-
դու ճակատագիրը :

«Ոտա՞ր յերկիր . . .» , Յերեմիան
ցնցվեց , խորասուզվեց մտքերի մեջ
և , հանկա՞րծ , վեր կացավ , վաղեց
տուն , յեղելությունը պատմեց կնոջը՝
այն խորագույն հույսով , վոր կինը
կմիանա իրեն և ինքը կը գտնի իր
միսիթարությունը :

— Վո՞չ մի անամոթություն չկա ,
յեղբայր և քույր են , — ասաց Հովնա-

թանի և Մարդարիտի հարազատ մայ

րու :

— Լոի՛ր , կի՛ն , — կշտամբեց Յերե-
միան , — ճիշտ և ասած Ա . դրբում —
ամենայն կին բող ե :

Կինը լոեց , յերկնքի կրակը կարող
եր թափվել իր գլխին :

— Գնում ե , թո՛ղ գնա , — վերջաց-
րեց Հայրը , բայց լոեց իր սեփական
հոգու հեկեկանքը :

— Ո՞ւր և Դավիթը , — հանկարծ հար
ցրեց նա :

Կանչեցին Դավիթին :

— Ա՛ռ այս մի քանի վոսկին , գնա՝
նստի՛ր մեծ ճանապարհի ծայրին , Զոր
Աղբյուրի մոտ , Հովնաթանը վոր գա-
տուր նրան և ասա՞ բարի ճանա-
պարհ :

— Յես ել գնամ , — աղաչեց մայրը :

Յերեմիան միայն աչքերը խոլորտեց
կնոջ վրա : Կինը լոեց և փակչեց պա-
տին : Տղամարդու խոսքն որենք եր

և այդ որենքը հաստատել եր ինքը
աստված :

Մարդարիտը լսում եր այդ բոլորը
վարագույրի յետևից։ Յերբ Դավիթը
դուրս ցատկեց վաղելու դեպի մեծ
ճանապարհը, Մարդարիտը կտրեց
նրա առաջը և ասաց.

— Դավիթ, սպասիր, յես ել եմ
դալիս։

Մարդարիտն իջավ ներքնահարկը,
վերցրեց Հովնաթանի սայնտակեղեննե
րը, ծրաբեց, դուրս յեկավ և ասաց.

— Գնա՞նք, Դավիթ։

— Համբուրի՛ր նրա կապույտ աչքե
րը, — շնչաց մայրը Մարդարիտին։

Զոր Աղբյուրը հին մի կառուցում
եր, նրա ջուրը վաղելիս ե յեղել առ-
յուծի և վագրի բերաններից, վորոնք
դեռ մնացել եյին դրեթե անվթար,
միայն, անժամանակ թվականներից
իվեր, ավերվել եր աղբյուրի ակը և
վո՛չ վոք, վո՛չ մի իշխող չեր մտածել
վերանորոգել և կենդանացնել այն։
Ժամանակի ընթացքում առասպել եր
հյուսվել նրա շուրջը։ Ասում եյին,

վոր գիշերները, և ամեն գիշեր, մի-
այն մի ակնթարթ, վազում և ջուրը և
կտրվում և յեթե վորեւ մեկը հասնի
այդ վայրկյանին և խմի հոսող ջրից՝
անմահ կը լինի։ Վո՛չ վոք, անժամա
նակ թվականներից իվեր, չեր հասել
այդ ակնթարթին, մինչև անդամ նը-
րանք, վորոնք գնացել եյին մայրա-
մուտին և սպասել մինչև լուսարաց,
չեյին կարողացել ըմպել հոսող ջրից,
վորովհետեւ քնով եյին անցել և ան-
մահության ակնթարթը թռել եր։

Մարդարիտը և Դավիթը հասան
Զոր Աղբյուրը և նստեցին կամարից
ընկած մի սրբատաշ և հնաբույր քա-
րի վրա։

Հովնաթանը, վորի հակատի վրա
իջել եր թախիծը, ինչպես թանձր վո-
շին, այդ ժամին, նստած Դավիթի վոր
դի Անդրեասի շիրմաքարի վրա՝ շըն-
ջում եր։

— Պա՛պ, դու պատվիրնցիր, վոր
վո՛չ վոք չեռանա այս աղնվագույն

կավից, բայց յես հեռանում եմ, կավը բարի և և ստեղծաբար, բայց մարդիկ չար են և խավար: Ների՞ր ինձ, պա'պ, յես վերցնում եմ մի ափ կավ և դնում եմ կըճքիս վրա, թող դալինի կապը իմ հոգու և այս հողի և լուսավորի իմ ճանապարհը:

Հովնաթանի մթին, մռայլ արցունք ները կաթեցին Դավիթի վորդու շիրմաքարի վրա, ինչպես անձրեսի առաջին մի քանի կաթիլները:

Հովնաթանի մի քիչ ել սպասեց, սպասեց լսելու պապի ձայնը, բայց վո՛չ մի շշուկ, միայն սղոխն եր անցնում դաշտից մեղմությամբ և քաղցրագին և ծփում եր խոտը և խշում եյին աերեվները, և վորոնց խառնը վում եր Հովնաթանի հեկեկանքը:

Յեզ նրա քայլերն ուղղվեցին դեպի մեծ ճանապարհը:

Մայրամուտից առաջ նա հասավ Գոր Աղբյուրը, վորտեղ նրան դիմավորեցին Մարդարիտը և Դավիթը:

Հովնաթանը կանգ առավ տեսնելով յեղբորը և քրոջը: Նա խոսեց նրանց հետ, բայց աչքերը հառել եյին հեռո՛ւ, հեռո՛ւ:

— Հայրիկը տվից այս վոսկիները, վոր ճանապարհին ծախսես, — ասաց Դավիթը:

— Այս ել քո սպիտակեղենները, — ասաց Մարդարիտը:

Հովնաթանին թվաց, վոր մի վայրկյան վերակենդանացավ դարերով չորացած աղբյուրը և կարկաչեց մեղմ և գորովագին:

Հովնաթանը գրկեց քրոջը, համբուրեց և ասաց.

— Արթո՛ւն յեղիր, վոր քո մարմինը չխոշտանգեն կյանքում, այդ մարմինը վո՛չ մի ժամանակ այնպես սըրբությամբ չի ոգտագործվի, վորքան յես ոգտագործեցի իմ կավի համար, զգո՛ւյշ յեղիր կյանքից, քո՛ւյր:

Մարդարիտը վոչինչ չպատասխանեց և թափեց դառնագույն արցունք-

ներ : Մթնշաղ եր արդեն , յերկնքում
բացվում եյին աստղերը , Հովնաթա-
նը տեսնելով քրոջ արցունքները , մը-
տածեց , վոր այդ արցունքները կը
թռչեն գեղի յերկնքի բարձունքները
և այդ գիշեր կավելանա աստղերի թի-
վը :

Ապա Հովնաթանը համբուրեց իր
փոքրիկ յեղբորը , շոյեց նրա դանդ-
րահեր գլուխը , վոսկիները դրեց գըր-
պանը , սպիտակեղենների ծրարը նե-
տեց ուսին , ինչպես մաղախը ճամբոր
դի և շարունակեց ճանապարհը ա-
ռանց յետեւ դառնալու :

Մարդարիտը և Դավիթը Հովնաթա-
նին հետեվեցին աչքերով , մինչև ճա-
նապարհը թաղվեց արտերի կանաչում
և ել չերեվաց Հովնաթանը :

Նրանք տուն հասան , յերբ լիալու-
սինը , ինչպես արյունաթաթալ գլու-
խը մարտիրոսի , բարձրանում եր լե-
ռան քաղաքի հին ամրոցի պարիսպ-
ների յետևից :

Նրանց վերադարձով խզվեց աան
լուռթյունը :

Մայրը վեր կացավ , մի քանի կրակ
դրեց խնկամանի մեջ և , մի քանի
պտղունց խունկ նետելով վրան , ման
ածեց տան բոլոր անկյունները :

Խնկի հոտը բարձրացավ ողակ առ-
օղակ , լցրեց տունը մեռելային բույ-
րով :

Լոռության և մթության մեջ լսվում
եր Յերեմիայի հեկեկանքը , աղեխարը
և միալար :

Ճ՛

Հովնաթանը դնաց և վո'չ մի լուր
չեկավ նրանից :

Մայրը յերդ կապեց նրա վրա , յեր-
դեց և լաց յեղավ :

Հայրը , ամեն պապի չարիսը դա-
տարկ տեսնելուն , թափեց արցունք-
ներ ձեվավորված անոթների վրա :

Մարդարիտն ամուսնացավ և կորց-
րեց իր մարմնի վարդը :

Դավիթը մեծացավ, չսկրեց բրում
տանոցի աշխատանքը և մտավ առեվլ-
տրական ասպարեզ:

Յեվ մի որ, յերբ Յերեմիան, չար-
խի վրա նստած՝ մի փարչ եր ձեւլա-
վորում, ձեռներն ու վոտները հան-
կարծ կանդ առան, ճգնեց, վերջին
լարումով, շարունակել աշխատանքը,
բայց չկարողացավ, նրան գրկեցին,
դրին սայլի վրա և տարան տուն:

Տան շեմքից լսեց նա գանգրահեր և
կապուտաչյա վորդու դժբախտ մոր
լացը և յերդը:

Պառկեցրին նրան անկողնում և
Անդրեասի վորդի Յերեմիան, առանց
թնդումների, առանց մահվան սարսա-
փի, փակեց աչքերը լոռությամբ և խա-
ղաղությամբ:

Նրան թաղեցին պապի կողքին:
Յերեմիայի մահից մի տարի անց՝
մեռավ Յերեմիայի կինը, յերբ մի
յերեկո, ըստ յերկար ժամանակի սո-

վորության, խունկ եր ծխում և յեր-
գում վորդու վրա կապած յերդը:

Դավիթը քաղաքում չեր, նա գնա-
ցել եր հարավային յերկրներ ապրանք
բերելու:

Վերադարձին նա գտավ ծնողներին
հանդչած վերի ավազանի վերեվում,
պապի կողքին: Նա խաչ հանեց և մի
քանի կաթիլ արցունք թափեց և հե-
շեց Հովնաթանին, վորի կարուր
քայլայեց ծնողներին:

Դավիթն այլևս չուզեց մնալ այդ
աշխարհում, վաճառեց ունեցվածքը,
դաղթեց դեպի հարավ, վորովհետեւլ
այնտեղ նրան դյութել եր մթին գույ
նով մի բոցավառ աղջիկ:

Գնալիս համբուրեց իր մեծ քրոջը
և ասաց.

— Գերեզմաններին լավ մտի՞կ
առուր:

Մարգարիտը հարցրեց նրան.
— Յեթե Հովնաթանը վերադառնա,
ի՞նչ ասեմ:

— Նա չի վերադառնա, — սլատամանանց Դավիթը հուսահատ:

— Կվերադառնա, — ասաց Մարգարիտը խորագույն հավատքով:

Յեկ բաժանվեցին քույր և յեղայր:

Յերբ գարուններին բարձրանում եյին հեղեղները՝ Մարգարիտը հոգածությամբ հողը վրա յերտալիս գերեզմանների կողքերին, վորպեսզի հանգըստարանները մնան անվրդով և չխռովվի նրանց տակ ննջող բրուտների հալիտենական սավառնումը:

ԺԵ

Յեկ մի որ մի կառք կանգ առայլ Անդրեասի վորդի Յերեմիայի հին տանը դռանը:

Կառքից իջավ մի չափահաս մարդ, ծամերի մեջ արդեն սպիտակ ալիքներով, ընտանի քայլերով մոտեցավ դռանը և բաղիսեց դռան յերկաթը յերեք անգամ՝ ըստ վաղեմի սովորության:

Դուռը բաց արավ մի անծանոթ կին:

Զափահաս մարդը, տեսնելով անծանոթ կնոջը, ամեն ինչ հասկացավ— հին տունն անցել եր ոտարների ձեռքը:

— Վո՞րտեղ են այս տան հին բնակիչները, — հարցրեց նա անծանոթ կնոջը:

Կինը խաչակնքեց: Առանց խաչակնքելու չեղ կարելի հիշել անցածներին:

— Վո՞րտեղ ե Դավիթը:

— Հարավի աշխարհում:

— Իսկ Մարգարիտը:

— Նա այժմ կինն ե մետաքսագործ Գրիգորի, վորդի թաղեռսի:

— Վո՞րտեղ ե նրա տունը:

— Ներքեվի թաղի կամարակառ աղբյուրի ճիշտ դիմացը:

Նորեկը հեռացավ խոնարհություն անելով:

Փողոցներից անցնելիս՝ վո՛չ վոք

չճանաչեց նրան։ Յերեխաների մի
բազմություն քայլում եր նրա յետե-
վից՝ հափշտակված ոտարական մար-
դու տարազից, մանավանդ հարդյա-
լայնեղր գլխարկից։

— Մարդարի՛տ…

— Հովնաթա՞ն…

Մարդարիտը գրկեց։ Հովնաթանի
դլուխը, սեղմեց իր տաք կրծքին,
ինչպես մանկանն իր առաջին, համ-
բուրեց յերկար, թափեց արցունքներ
ջինջ, աստղային մաքրությամբ։ Ար-
ցունքը ջինջ ե, յերբ թափվում է ու-
րախության համար, վորովհետեւ նա
բղխում ե լուսավոր և զով հատա-
կից։

Յերբ քույրն համբուրում եր յեղ-
բոր գլուխը, քրոջ մանուկները փա-
թաթվեցին Հովնաթանի սրունքնե-
րին, նրանցից մեկը մինչև անդամ
մադլցեց նրա ուսը։

Մանուկները լսել եյին Հովնաթանի
անունը, բայց վոչ վոք չհայտնեց

նրանց թե՛ ահա յեկել ե մորեղբայ-
րը, նրանք այդ զգացին բնազդով և
նրանց արյունը, մոր արյան նման,
վոստոսեց յերակներում։

Ժ2

Հաջորդ առավոտյան՝ Հովնաթանը
բոնեց Մարդարիտի ձեռքը և նրանք
գնացին վերի ավաղանը, տեսնելու
պապի, հոր և մոր գերեզմանները։

Մինչև գերեզմանները՝ Հովնաթա-
նը հարցրեց Մարդարիտին։

— Ի՞նչ յեղան հորեղբայրները։

— Հորեղբայրները մեռան, ինչպես
հայրիկը, վորովիները դեռ աղյուս են
թափում, տե՛ս այն հնոցի ծուխը,
նրանց հնոցն ե, վոր վառվում ե, իսկ
մենք ոտարականներ ենք գրեթե, յեր
բեմն հանդիպում եմ մեկն ու մեկին
փողոցում և բարեվում։

— Հորեղբայրներն ինձանով չե-
տաքրքրվեցի՞ն յերբ և իցե։

— Հեշում եմ, մի անդամ մեծ հո-

ըեղբայրն հարցրեց՝ ի՞նչ լուր ան-
պետք տղայից, չպատասխանեցի:

Հովնաթանը ցավագին ժալտաց :

Հասան վերի ավաղանը :

Հովնաթանը վարդեր դրեց շիրման
քարի վրա, նայեց իր քանդակած և
թրծած պապի արձանին, վոր փշրվե-
լով ավելի եր այլանդակվել, ծիծա-
ղեց հոգում և բարձրացավ ավաղանի
թմբի վրա: Ավաղանում ջուր չկար,
հատակում, առավոտյան արեվի չո-
ղերի տակ փայլուն եյին աղնվագույն
կավի հետ խառն զանակները: Հով-
նաթանը նայեց նորից այդ կավին և
նրա հոգին դողաց ստեղծագործու-
թյան աննախընթաց տենչով, իսկ
Մարգարիտը, կանդնած կողքին, հի-
շում եր այն որը, յերբ ինքը լողա-
նում եր, և Հովնաթանը տեսավ իրեն,
հիշում եր այն որվա ըրի զովությու-
նը և զդում եր ջրի կաթիլները, վոր
կաթում եյին ծամերից՝ կրծքի և ու-
սերի վրա:

Նրանք իջան թմբից ներքեվ, Հով-
նաթանը նստեց պապի շերմաքարի
վրա և խոսեց այսպես.

— Դու պատվիրեցիր մեղ, վոր
մենք, պա'պ, չպաժանմենք այս կա-
վից, յես բաժանվեցի, բայց կրծքիս
վրա միշտ կրելով այս կավից մի ափ,
նա խփում եր իմ կրծքին և յես միշտ
սարսում եյի նրա ջերմությունից,
ահա վերադաբել եմ, պա'պ, այս կա-
վի կարոտով, իմ եյությունը վառ-
վում ե այժմ այս կավի բու լով, այս
կավի անիմանալի և անքննելի ջերմու-
թյամբ: Պա'պ, յես կուրծք տվի աշ-
խարհի յերկաթյա հողմերին, ապրեցի
կյանքի բոլոր հուզումները, իջա-
կյանքի հատակը, լսեցի ամենից
աղեխարշ կանչը կյանքի, ապրեցի և
վերապրեցի մարդկության վողբեր-
գությունն ու կատակերգությունը:
Պա'պ, մարդկության աղնվագույն մե-
ծամասնությունը տառապում ե թըշ-
վառությունից: Աշխարհի խորագույն

վողբերդությունը վո՛չ թե մահն ե,
այլ կյանքի թշվառությունը։ Յեզ
թշվառությունը ծնեցնում ե աղնվա-
գույն ատելությունը, զբահապատում
ե հոգին, դարձնում ե մարդուն ըմ-
բոստ և դյուցազն։ Յես լսեցի, վո՞
թշվառությունը՝ բարձրացել ե և այս
հին յերկրում։

Հովնաթանն այլևս չչարունակեց,
վորովհետև նրա կապույտ աչքերը
լցվեցին արցունքով։

Մարգարիտը բռնեց նրա ձեռքը և
ցույց տվեց նրան քաղաք տանող արա
հետը։

Արահետը յեղերված եր բարձր խո-
տերով, մասրենիների թփերով և վայ-
րի դեղին վարդերով։ Նրանք քայլե-
ցին այդ արահետով լուռ և մտա-
խոհ։

Հանկարծ հարցրեց Մարգարիտը։

— Վորտե՞ղ եյիր ապրում այսքան
յերկար տարիներ և ի՞նչ եյիր անում։
Հովնաթանը, նստելով մի քարի

վրա և նստեցնելով Մարգարիտին իր
կողքին, ասաց.

— Յես ապրում եյի արեվմտյան մի
յերկրում։ Այդ յերկիրը, յերկարա-
վիզ կոչիկի նման, միւրճված ե կա-
պույտ և մեծ և հին մի ծովում։ Այդ
յերկրում ծաղկում են լիմոնն ու նա-
րինջը, աճում ե ձիթենին, աճում ե և
հալվեծառը և խաղողի վողկույզը
կախվում ե վորթատնկից, ինչպես
ստինքն աղջկա հասակից, քաղցրա-
նում ե հնդկաթուղը, բարձրանում և
պտուղ ե տալիս արմավենին, ինչպես
արաբական աշխարհում, բամբակի
կնդուղն որորվում ե հարավի տաք
քամուց, կարմրում ե նուռը, ինչպես
արյունալի լրթունքը, իսկ յերկրի
հյուսիսային լեռներում մթնում են
կաղնու և մշտաղալար մայրիների ան-
տառները։ Հյուսիսային բարեխառն
գոտու մեջ յերկարած այդ հին յերկի-
րըն ոժտված ե արեվադարձային հա-
րուստ բուսականությամբ։ Կանայք
բուստ բուսականությամբ։

ունեն աչքեր, ինչպես յերկրի լիմոնը,
աչքեր, ինչպես ծովը, աչքեր, ինչպես
յերկրի ձիթապտուղը և ծամեր, ինչ-
պես նարինջը և ծամեր, ինչպես ածու-
խը, հասակ ունեն նրանք, ինչպես սո-
սին, և մարմինները ճկուն են, ինչպես
ծովի ալիքները։ Ծովի վրա գոնդոլ-
ներն են սահում, և գոնդոլների կուրծ
քըն ուռչում ե յերդով, յերկիրն ամ-
բողջ յերդ ե և ծափ։

Յեկ արեվաղարձային այդ յերկ-
րում կառուցված են մարմարյա քա-
ղաքներ։

Ես ապրում եյի մարմարյա այր
քաղաքներից մեկում։ Հին քաղաք ե
դա, ավելի հին, քան մեր
ամենահին մադաղաթը։ Այդ քա-
ղաքի յուրաքանչյուր մարմարե
բեկորը կապված ե առասպելական
եպիքական դարերի հետ։ Յերք
մին վաղում ե ծովից և բերում ե նոր,
թարմագույն որերի բուրումը և խոտ
նվում հին քարերի բույրին՝ կյանքը

դառնում ե զգլիսիչ մի յերազ, աստ-
ղերն իջնում են ծովը և յերկիրը, հին
այդ յերկիրը, թրթում ե; ծովի և
յերկնքի միջեվ, իրենվ մի մեծ քնար
և յուրաքանչյուր թուփի, յուրաքան-
չյուր քար և խոտի յուրաքանչյուր
շյուղ շնչում ե ու յերգում, ինչպես
մարդկային սիրուը։

Իսկ այդ սքանչելի յերկրի հատա-
կում հոսում ե թշվառությունը։
Մարդկային քաղցը, զարհուրելի և
ահավոր, գալարում ե բաղմություն-
ներ, բազմություններ հին ու նոր
սերունդի, վորոնք այնքան գեղեցկո-
րեն և այնքան հոյակապորեն կառու-
ցին մարմարյա քաղաքները։ Յերկրի
ընդերքում, խուլ տնքոցով, դոփում ե
մարդկային զրկանքը։ Յեկ այդ խուլ
տնքոցը շուտով, շուտով կը վերածվի
ծովի ահարկու մոնչյունի, և աշխա-
տավոր, ստեղծարար, բայց զրկված
մարդիկ կը բարձրանան հատակից,
ինչպես կիկլոնը և ինչպես հողմերից
վորոտացող ծառերը։

Յերկիրը մարմարներով են ծաղկեց-
բել մարդկության այդ բազմություն-
ները:

Այդ յերկրում ե ապրել աշխարհի և
բոլոր ժամանակների մեծագույն քան
դակադործը:

Յես իմ աչքերով տեսա նշա արձան-
ները, իմ այս ձեռքերով շոշափեցի
նրա մարմարները, վորոնք դարեր
շնչում են և ավելի կենդանի են, քան
այժմ այդ յերկրում ապրող մարդկերը:
Տեսա, իմ այս աչքերով, արձանն այն
ծերունու, վոր, ինչպես հին, առաս-
պելապատում մատյաններն են հաղոր
դել, խոսել ե աստծո հետ այրող ա-
վագներից բարձրացող լեռան կա-
տարին: Աստված խոսել ե, ըստ ա-
ռասպելապատում մատյանների, ամպ
րոպի միջոցով, այն ծերունին, վոր
ջրվեժի նման թափվող միրուք ունի,
և վորը աղատել ե իր ժողովուրդը
բռնակալությունից, քաղցից և անա-
պատի արհամիլիրքից:

Յես յերկրապեցի հին այդ վարպե-
տին և վարպետներին և սովորեցի նը
բանց արվեստը: Յես վորոշեցի վերա-
դառնալ և քանդակել մեր կավով և
մեր սպիտակ քարով:

Հովնաթանը լոեց:

Մարդարիտը հարցրեց.

— Հովնաթա'ն, մե՞ծ և թշվառու-
թյունն այնտեղ:

— Այո՛, թշվառությունը ծովի չափ
և ծովը թշվառության չափ:

— Իսկ ինչո՞ւ յերկիրն այդքան գե-
ղեցիկ և թշվառությունը շատ:

— Այդ նրանից ե, քո՛ւյր, վոր կան
իշխողներ և իշխավողներ:

Տիրեց լուռթյուն:

Երբգում եր անհուն դաշտի սղոխը,
որորվում եր վայրէ վարդը, իսկ խո-
տը՝ ծիում:

Հովնաթանը և Մարդարիտը հասան
տուն, յերբ արեվի մեծ նարինջը թեք
վում եր սարի յետեվը և մուգ կա-
պույտը բարձրանում եր յերկրից:

Մառերի տակ առվակներ եյին նը-
վադում, իսկ ծառերի վրա թափվում
եյին իրիկնային զանգակի լուսավոր
փշուրները:

ԺԵ

Մարդարիտի ամուսինու ասաց Հովլ-
նաթանին.

— Մեր տան ներքնահարկը վոչնչի
չի ծառայում, վերցրու և աշխատի՛ր
այնտեղ, քնի՛ր պարտեղի վրա նայող
փոքրիկ սենյակում, Մարդարիտի յե-
փած ճաշը բարձական ե և՛ մեղ և՛ քեզ:

Հովնաթանը շնորհակալության հա-
մար ասաց.

— Դու իմ յեղբայրն ես:

Այդ գիշեր Մարդարիտը փաթաթ-
վեց ամուսնուն կրակե թեվերով, իսկ
ամուսինը համբուրեց նրա վողորկ,
կլոր և լուսավոր թեվերը:

Առավոտյան Հովնաթանը հաղավ
սպիտակ շապիկ, դլխին դրեց մի գը-
տակ, ինքն անձամբ մաքրեց ներքնա-

հարկը, կանչեց վորմնադիրը, բայ
անել տվեց մեծ լուսամուտ:

Հաջորդ որը չինել տվեց զանազան
չափի կավակալներ, ինքն անձամբ
գնաց ավաղանները, լցրեց սայլն աղ-
նվագույն կավով, բերեց և դարսեց
ներքնահարկի մի անկյունը:

Յեվ ներքնահարկը կոչեց աշխա-
տանոց :

Յերրորդ որը, սայլապանի հետ
միասին, գնաց լեռը, ընտրեց սպի-
տակ քարի բեկորներ, փոքր և խոշոր,
բերեց և դրեց աշխատանոցում :

Չորրորդ որը նա ներքեվ իջեցրեց
իր հետ բերած գործիքները և դար-
սեց ինչպես հարկն եր:

Մարդարիտն ու ամուսինը իջան
ներքեվ և մնացին զմայլած :

— Յեղբայր իմ Հովնաթան, — ա-
սաց Մարդարիտի ամուսինը, — այս
ներքնահարկը կառուցված որից լույս
չեր տեսել, ահա պատերը ցնծում են
լույսից :

Յեկ ամեն յերեկո, յերբ Հովհաննիս
նը վեր եր բարձրանում աշխատանո-
ցից՝ նրա թարթիչների վրա նստած
եր լինում սպիտակ քարի նուրբ փո-
շն:

Առաջին անգամ նա քանդակեց յեր-
կու Փիգուրա, մեկը գեղեցկությունն
եր ներկայացնում, մյուսը՝ թշվա-
ռությունը: Յերկու Փիգուրաների
գոտներն ել խրված եյին քարե կոշտ
դանդվածի մեջ:

— Ինչո՞ւ յերկուսի վոտներն ել
խրված են քարի մեջ,—հարցրեց Մար
գարիսը, յերբ նա տեսակ գրեթե վեր
ջացած:

Հովհաննը պատասխանեց.

— Քարը մայր յերկիրն ե՛, քո՛ւյր,
յերկուսն ել աճում են մայր յերկից
— գեղեցկությունը և թշվառությու-
նը— նրանք միացած են իրար մայր
յերկում, յերկուսն ել ծնունդ են
մայր յերկի:

Յեկ Հովհաննը քանդակում եր
ամեն որ:

Նրա մուրճի հարվածները լսվում
եյին լուսաբացից մինչեւ մայրա-
մուտ, յերեմն կարձ և յերեմն յեր-
կար ընդհատումներով, փշրվում եր
սպիտակ քարը և թափվում զետնին:
Նրա մուրճի հարվածները լսվում ե-
յին վերի հարկից խուլ և խորը, ինչ-
պես բարախումը սրտի:

Հովհաննն աշխատում եր թե կա-
վի և թե սպիտակ քարի վրա: Կավի
աշխատանքները՝ վերջացնելուց հե-
տո՝ թրծում եր:

Յեկ աշխատանոցը հետզհետե սկը-
սեց չնչել Փիգուրաների բաղմու-
թյամբ: Սկզբնական որերի ամայու-
թյունը լցվեց կենդանի չնչով, պատե-
րի առաջ, զարակների վրա, գետինը,
ամեն կետում արձաններ եյին դրված,
վորոնցից ամեն մեկը մի մարմնավոր
ված գաղափար եր, կենդանի պոե-
զիա:

Ահա մի գանձարան, գանձարանի
կողքին մի յերիտասարդ, աղեղը ձե-
ռին, կապարճն ուսին, թիկնեղ, ջլա-
պինդ, ուռած կրծքով, պաշտպանում
և այդ գանձարանը, վորի մեջ ամ-
փոփլած և մարդկության ստեղծադոր
ծության լավագույնը :

Ահա յերկրորդը — յերկու վորք,
քույր և յեղբայր, փաթաթված ի-
րար՝ տոկալու կյանքի մըրկին :

Ահա յերրորդը — մի թռչող և մերկ
աղջիկ՝ սուրը ձեռին :

Ահա չորրորդը — մի մարդ, ցնցո-
տիապատ, աչքերը թաշկինակով կա-
պած, չոքած գետնին, գլուխը կախ
դեպի մայր հողը, նրա կողքին դահճի
մթին կերպարանքը, յերկու ձեռքով
բարձրացրած նրա վզին ծանր դա-
շույնը՝ պատրաստ գլխատելու :

Ահա հինգերորդը — մի մայր թեե-
րը պարզած, ծամերը հովին, խելառ
հեղ վաղքի մեջ, կարծես լսվում և
նրա աղիողորմ վողբը :

Ահա վեցերորդը — արեկի տակ կքած
հողի աշխատավորը, վորի մեջքը,
սրունքները, բազուկները պատմում
են ահավոր հոգնածությունը :

Ահա յոթերորդը — մի քանի բան-
վորներ իրար վրա բարձած մկաննե-
րով, քանդում են լեռը քլունդներով :

Ահա ութերորդը — մի ծերունի,
նիհար, գրեթե միայն վոսկորների մի
զանգված, ճաղատ գլխով, կարճա-
տես, ձեռքեր՝ ուռած յերակներով,
կքած մի դըքի վրա :

Ահա իններորդը — մի աղջիկ, գըր-
կած իր նորածին մանկան գլուխը,
տխուր, մուայլ, վորովհետեւ փա-
խել և նրա հետ զվարճացող սրիկան :

Յեվ այլ մանուկներ, այլ կանայք
և տղամարդիկ, բոլորն ել թշվառ և
ըմբոստ :

Հովնաթանը քանդակել եր նաև
ձիեր՝ զանաղան վաղքերի մեջ, մի
հղի շուն՝ ստինքների պատուկները
հպած գետնին, մի արջ՝ վորսորդին

գրկած և մի առյուծ՝ մի ընտանի ա-
նասուն հոշոտելիս :

Մի ամբողջ աշխարհ եր չնչում Հով
նաթանի աշխատանոցում :

ԺԷ

Բայց մարդկային չարությունը,
խավար միտքը, հետամնացությունը
և ծրիակերների իշխանությունը չթո
ղին, վոր արվեստագետն ստեղծա-
գործեր խաղաղությամբ և խնդու-
թյամբ :

Հովնաթանը կանացի ֆիզուրանե-
րի համար աշխատանոց եր բերում
կանացը, մերկացնում նրանց և
քանդակում : Այն կանացը, վորոնք
համաձայնվում եյին մերկանալ ար-
վեստագետի առաջ, բնականորեն բա-
րի վարքի տեր կանացը չեյին, թեև
նրանցից ամեն մեկին չեր հանդիպել
մի մարդ, վոր ալելի բարոյական լի-
ներ, քան Հովնաթանը :

— Բողեք և տանում աշխատանոցը,
մերկացնում ժամերով, — բամբասում
եյին նրանք ; վորոնք այդ միւնույն
բողեքի հետ գիշերներ եյին անցկաց-
նում :

Եերբ մարդիկ, բամբասանքից այր-
վող մարդիկ, տեսան, վոր արվեստա
գետը դույլն արժեք չի ընծայում ի-
րենց բամբասանքներին՝ հնարեցին
ուրիշ բամբասանք :

— Ավաս'ս, հաղա՛ր ախտո Յերե-
միայի վորդի Հովնաթանին, — ասում
եյին նրանք, — զնաց, աշխարհներ
թափառեց, վերադարձավ լայնեղը
դԱխարկով, բայց անսլետք մի արա-
րած և, ուտում և իր քրոջ ամուսնու
հացը :

Այրում եր Հովնաթանին վերջին
բամբասանքը — ուտում և քրոջ ա-
մուսնու հացը :

Յեկ կերած հացը հետզհետե մնում
եր կոկորդում և կուլ չեր զնում :

Սկզբներում նա յերբեք մտադրու-

թյուն չուներ վաճառելու իր աշխարհանքներից մեկն ու մեկը, բայց յերբ հացը մնաց կոկորդում, զիջեց և հայտարարեց վաճառք:

Մեծ բաղմություն հավաքվեց նրա աշխատանոցը, դիտեց, զմայլվեց, բայց վո'չ վոք վոչինչ չփնեց:
— Առնենք, լինչ անենք, — մտածեցին բոլորը:

— Յեթե փող տամ մի բանի, գոնե փորս կտացնի, — տրամաբանեց մեծամասնությունը:

Վորքան վոր Հովնաթանը վաճառք եր հայտարարել և սպասում եր ծախել իր աշխատանքներից մեկն ու մեկը և գեթ ժամանակավորապես աղատվել քրոջ ամուսնու հացից, բայց յերբ պատկերացնում եր, վոր ահա վաճառվեց մեկը և տանո՞ւմ են... հոդին դողդոջում եր այդ հեռապատկերից:

Յեկ վոչ մի աշխատանք չվաճառվեց

Հուսահատությունը, ինչպես յերկաթյա շլթա, պատեց նրան:

Վերջապես Հովնաթանը միտք հղացավ դիմել աղգին, վորպեսզի աղգն ինքը վերցնի բոլորը, տա վորոշ գումար, պայմանով, վոր բոլորը միասին ցուցադրի դահլիճում: Աղդին պատկանող այսպիսի դահլիճներ բարգում եյին:

— Վարժապետ, — ասաց թեմի առաջնորդը, վոր յեպիսկոպոս եր և աղգն եր ներկայացնում, — թագավոր քանդակի՛ր, Քրիստոս քանդակի՛ր, սուրբ առաքյալք քանդակի՛ր, քեզ փող տամ:

— Յերկու որից պատասխան կտամ, սրբազա՛ն, — ասաց Հովնաթանը և հեռացավ:

Հուսահատության վոխարինեց զայրույթը և ցցվեց նրա աչքերում, ինչպէս մերկ և վոճրի պատրաստ դաշույնը:

Յերկու որից անց՝ առաջնորդա-

բանի ծառաները, կլիսավոր քարտու-
ղարի առաջնորդությամբ, հանդիսա-
վորությամբ սրբազնի առաջ դրին
մի ծանր տումի, վոր նվեր եր ստաց-
ված սրբազնի համար :

— Բա՛ց արեք, — հրամայեց սրբա-
զանը հագալով և միրուքը չոյելով:

Դահլիճում, աջ և ձախ, բաղմել
ելին աղդի յերեվելիները :

Գլխավոր քարտուղարն ինքը բաց
արավ տումիը, քանդելով խնամքով
կատված կարմիր ժամկավենները :

Եերը դուրս բերվեց նվերը՝ բոլորն
ապշահար մնացին իրենց տեղում,
վոչ վոք չհամարձակվեց նայել սըր-
բազանին, իսկ սրբազնի միրուքը
վեստիւմ եր, վորովհետեւ դողում
եր նրա ծնոտը զայրույթից :

Նվերը մի մինխատուր արձան եր՝
յերկու ֆիգուրայով: Մի ֆիգուրան
ինքը՝ սրբազնն եր, իսկ մյուսը՝
Հովնաթանը, բուռնցքը յերկարած

սրբազանին, բթամատը սրբազանի
ճիշտ քթին:

— Նզո՞վք, — հանկարծ գոռաց
սրբազանը:

Ազգի յերեվելիները վեր ցատկեցին
բազմոցներից և քարացան:

Եերկար քարացումից հետո՝ յերե-
վելիներից մեկը մի քիչ առաջ յե-
կավ, խոնարհվեց և ասաց.

— Մի՛ զայրանաք, սրբազա՞ն, լավ
չե ձերդ սրբության մարսողության
համար :

Սրբազանը, աջ ձեռքը, վորի ցու-
ցամատի վրա կար զմբուխտի մեծ
ակով մի վոսկյա մատանի, տարավ
փորին և շիեց բավականությամբ:

Հուսկ ապա հրամայեց սրբազանը.

— Տարե՛ք այդ դիբիլը և փշեցե՛ք:
Գլխավոր քարտուղարը կանչեց ծա-
ռաներին: Նրանք վերցրին արձանը և
տարան:

Ազգի յերեվելիները հեռացան խո-
նարհվելով սրբազնի առաջ, իսկ

սրբաղանը քաշվեց իր ննջարանը, վոր
տեղ նրան սպասում եր իր տասնյակ
պոռնիկներից մեկը:

Գլխավոր քարտուղարը փլրել չտվեց
արձանը, այլ ուղարկեց իր “տունը”:
Ծառաներին տվեց ցորեն, ալյուր,
շաքար, մեղր և գինի առաջնորդա-
րանի ճոխ մառանից և պատվիրեց
վոչինչ չհայտնել սրբաղանին:

Գլխավոր քարտուղարը տանը յեր-
կար դիտեց արձանը, նրան բռնեց մի
հոմերական ծիծաղ, վորովհետեւ հի-
շեց սրբաղանի բազմելլութավշյա լայ-
նանիստ աթոռի վրա, նրա դոռող նայ
վածքն ի սպասումն այն նվերի, վոր
Քրիստոսի յեկեղեցու ամենահպարտ
մի ծառան ամենախոնարհաբար ու-
ղարկել եր իրեն:

— Փշեցինք, գարձրինք փոշի և
ավեցինք ամենորյա աղբի հետ, — զե
կուցեց սրբաղանին գլխավոր քարտու-
գարը:

ԺԲ

Արվեստագետի համար որերը դար-
ձան դժնղակ: Քաղաքում շատ քչերը
վողջույն եյին տալիս նրան և վող-
ջույն առնում: Սրբաղանը նզովք եր
կարդացել նրա գլխին — անսաստված
և անբարոյական:

Մարդարիտի ամուսինն անգամ դա-
տապարտում եր, վոր աղդի առաջ-
նորդին այդպես սուր կերպով ծաղ-
րել եր Հովնաթանը:

Միայն Մարդարիտն եր, վոր մո-
տենում եր յեղբորը նույն անդրդվելի
հավատքով և անեղծանելի սիրով:
Քույրն իր ձեռքերով լվանում եր նրա
սպիտակեղենները, կարկատում գուլ
պաները, կարում կոճակները, հար-
դուկում աշխատանոցի սպիտակ շա-
պիկները:

— Հովնաթան, մի՛ հուսահատվիր,
յես կկտրեմ իմ ծամերը, կլաճառեմ
և քեզ կապրեցնեմ, — ասում եր անձնը
վեր քույրը:

Բայց Հովնաթանն այլես վեր չեր
բարձրանում ճաշի, վորովհետև չեր
ուղում վեճի բռնվել քրոջ ամուսնու
հետ։ Մարդարիտը լավաշի մեջ փա-
թաթում եր ճաշի մնացորդը, զնում
գոգնոցի տակ և իջնում աշխատանո-
ցը և տալիս Հովնաթանին։

— Մարդս ուղարկեց, — ստում եր
քույրը, վորպեսդի յեղբայրն ուտի
բերած մի պատառը։

Հովնաթանը չեր հավատում քրո-
ջը, բայց նրա բացակայության ծա-
մում եր բերած ճաշը։

Եեվ սրբազնը, տեսնելով վոր իր
նզովքից հետո յել Հովնաթանը
կուշտ ե, ապրում ե և ստեղծադոր-
ծում, կանչեց իր մոտ Մարդարիտի
ամուսնուն և ասաց։

— Հավատո՞ւմ ես դու ասառեծո։
— Այո՛։

— Հավատո՞ւմ ես դու Քրիստոսին։
— Այո՛։

— Հավատո՞ւմ ես դու Քրիստոսի
յեկեղեցուն։

— Այո՛։

— Հավատո՞ւմ ես, վոր յես նույն
այդ յեկեղեցու ներկայացուցիչն եմ։

— Այո՛։

Սրբազնը վոտի կանգնեց և հրա-
մայեց։

— Իո տան մեջ բնակվում ե մի
շուն, անաստված և անբարոյական,
պկտք ե զրկես նրան հացից։

— Հնազանդ եմ, սրբազա՞ն, — պա-
տասխանեց ստրուկլը։

— Ուրեմն դնա՛, — հրամայեց սըր
բազա՞նը։

Մարդարիտի ամուսինը դուրս յե-
կալ և սկսեց քայլել դանդաչունով։

Հասավ տուն, իջավ Հովնաթանի
աշխատանոցը։

Հովնաթանի մուրճի հարյածները
բաղկացին նրա սրտին, մոտեցալ
բռնեց նրա մուրճը և դորովանքով
նայեց այն մարդուն, վորին յեղ-

բայր եր կոչել։ Յերկար ժամանակ
եր, վոր նրանք, ապրելով միւնույն
տան մեջ, չեցին հանդիպել իրար։

Հովնաթանը, տեսնելով նրա աչքե
րի մեջ յեղբայրական հին զգացումը,
նետեց մուրճը, բաց արակ բազուկ-
ները և նրանք գիրկընդխառնվեցին
ջերմությամբ և կարոտով։

Ապա Մարդարիտի ամուսինը պատ
մեց ամեն ինչ մանրամասնորեն։

Հովնաթանն ասաց.

— Յեղբա՛յր, դիմեր ինձ միայն
այս ներքնահարկը։

Մարդարիտի ամուսինը գլուխը կա
խեց ամոթահար։

— Այսպես արա՛, վոր վո՛չ վոք չի-
մանա, թե յես քեզ հաց եմ տալիս, —
ինդըց փեսան։

— Եստանում եմ, բայց շուտով
կհասնի մահը և դու կազատվես յեր-
կու սրից, — շարունակեց Հովնաթանը
խաղաղությամբ և աչքերի արտա-
կարգ փայլով։

Մարդարիտի ամուսինը նորից փա-
թաթվեց նրան և ասաց.

— Ների՛ր ինձ։

Հովնաթանը ժպտաց՝ ցույց տա-
լու համար իր ներումը և անդորրու-
թյունը։

Ի

Յերեկոյան Հովնաթանը փոխա-
դրեց իր անկողինը ներքնահարկ։

Գիշերը, մենակ, նստած թաց կա-
վի կույտի առաջ, խոսեց այսպես.

«Կա՛վ, հասել ե ժամը, վոր յես
պիտի կերտեմ քեզանով իմ վերջին
քերթվածը։ Հալածում ե ինձ խա-
վարը։ Խավարը նույնպես մարդկա-
յին թշվառությունն ե։ Յերբ կոտ-
րատում են լուսատու լապտերը, չո-
քում ե խավարը։ Կա՛վ, դո՛ւ ես ա-
մեն բանի նախանյութը, դու յես
նախաձեվը, դու յես, վոր բոսորաց-
նում ես վարդը, դու յես, վոր բարձ
րացնում ես ծառերը և կախում ես

Յյուղերից յերփներանդ մըզերը, դռւ
յես, վոր բաշխում ես հացը, դռւ
յես, վոր կերպարանափոխում ես,
հար և հավիտյան, բյուրավոր սքան-
չելի ձեվերով, դռւ յես, վոր եյլ,
կաս և պիտի լինես, տուր ինձ քո
ընդերքի անիմանալի և անհաղթելի
ուժը»:

Արվեստագետը խոսում եր բարձ-
րածայն և նրա ձայնը կարծես բըշ-
խում եր հոգու արեվային հատակից
կես գիշերի մենակության և մթու-
թյան մեջ:

Յեվ, հանկարծ, նրա աչքին, ինչ
պես հրաշալի տեսիլք, ինչպես մոռիթի
արդանդից հառնող լույսի զվարթ մի
շող, պարզվեց և բարձրացավ մի նոր
ստեղծագործության ծրագիրը:

Նա հարձակվեց կավի քառսային
կույտի լրա և սկսեց արագ, տենդա
գին և հափշտակությամբ ձեվավորել
այդ տեսիլքը՝ մինչեւ բողոքեցին նրա
հոգնած վոսկորները:

Յերբ նա յերկարեց անկողնում և
քաշեց վերմակը վրան, նրան թվաց,
վոր ընկղմվեց մի խոնավ նկուզի
մեջ: Անկողինը թաց եր, վորովհոտե
ներքնահարկը չափազանց խոնավ եր,
մանավանդ միշտ թրջած մեծ քանա-
կությամբ կավի գոյությունից:

Առավոտյան Մարդարիտը նախա-
ճաշ բերեց: Հովնաթանը յերբ բաց
արավ աչքերը և տեսավ քրոջը, վոր
նայում եր իրեն գորովանքով, ծըս-
տաց: Մարդարիտին թվաց, վոր նրա
կապույտ աչքերից բացվեց այդը:

Որը բոլոր Հովնաթանն աշխատեց:
Ավելի և ավելի յեր ձեվավորվում
նրա տեսիլքը.—ահա մի բլուր, բլրի
մի կողին՝ ծերունիներ, կանայք, աղ-
ջիկներ և յերիտասարդներ, վորոնց
սրունքներին փաթաթված են ահա-
բեկված մանուկներ, մի քանի կա-
նայք ծծկեր յերեխաներով, բոլորն
ել ցնցոտիապատ, մանուկները մերկ,
բոլորն ել հողմածեծ և հալածական,

մազեցը մըրիկից գլուզված դիմում են
դեպի բլրի գագաթը, իսկ բլրի գա-
գաթը բարձրանում եր մի ամե-
հի մարդ—ջահը ձեռքին։ Բոլոր ֆի-
գուրաներն ել ձգտում եյին դեպի
այդ ջահը։

Հովնաթանն աշխատում եր արագ
և տենդագին, վորովհետև նրա առող
ջությունը դառնում եր սպառնալից,
նա շտապում եր, վորպեսդի կավից
հետո սկսեր քանդակել այն՝ սպիտակ
քարից, բնական մեծությամբ։ Նա
զգում եր, վոր մահը, համառ և ծա-
նըր քայլերով, մոտենում է։ Վոչ մի
յերկյուղ չեր զգում սակայն մահից,
նա միայն ցանկանում եր ապրել այն
քան, վորքան կարողանար քանդակել
իր հուշարձանը քարից։

Եեվ ահա մահվան դիմաց՝ նա ձեւա-
վորում եր մարդկային տառապանքը—
մկանների գալարում, ճղակոր վոս-
կոքների տանջանք, բացված և բլրի
գագաթը ձգտող թեզեր, կույր և խռ

ը աչքեր, հողմից ծեծված ցնցոտի-
ներ, մանուկների պակուցում և սը-
րունքների հողնածություն։

Մարդարիտը, տեսնելով յեղոր
որեցոր դալկացող դեմքը, մեղրա-
մոմի նման դժգույն ձեռքերը և աչ-
քերի արտակարգ պայծառությունը,
խորապես մտահոգվում եր նրա առող
ջական վիճակով։

— Պետք ե Հովնաթանին վեր փո-
խադրել, պետք ե նրան միառժամա-
նակ աղատել աշխատանքից, — շնչաց
Մարդարիտն ամուսնուն, յեր նրանք
բակի հին թթենու տակ կանգնած,
խոսում եյին Հովնաթանի մասին։

— Այո՛, պետք ե փոխադրել, հա-
մաձայնվեց ամուսինը։

Նրանք միասին իջան աշխատանոցը
և ստիպեցին Հովնաթանին փոխադրը
վել վերեվ և յերկար ժամանակով
հանգստանալ։

— Վաղը կվերջացնեմ աշխատանքը
և յերեկոյան կփոխադրվեմ, — խոս-
տացավ Հովնաթանը։

Նրա ձայնը հնչում եր ոտարութիւն
կես որից հետո Հովնաթանը յեր-
կար աշխատեց մի քանի մանրամաս-
նությունների վրա:

Յերեկոյան շուտ պառկեց բոլորո-
վին հոգնած, գրեթե ուժապատ:

Նա զարթնեց կապույտ լույսին,
սրտի անհանդատությունից:

Ողը չեր բավում: Վեր կացավ: Ինչ
վոր տարորինակ զգացում պատեց
նրան: Բովանդակ շրջապատը փոխ-
ված եր թվում: Մոտեցալ լուսամու-
տին: Բաց արավ: Շնչեց առավույան
թարմ ողը: Կարծես մի քիչ կազդուր
վեց: Թարմ ողը չնչելիս՝ նա մտա-
ծեց մահվան մասին, դարձավ, նա-
յեց հուշարձանին և կարոտագին մո-
տեցալ նրան, վերցրեց ամենանուրբ
գործիքը, վիրճեց աշխատել, բայց
ձեռքը թուլացավ: Հովնաթանն զգաց
վոր աշխարհի դուռը փակվում եր
իր գեմ, մարմինը դավաճանում եր,
բայց նա վերջին անգամ հավաքեց

իր հոգու ամբողջ ուժը, կարողացալ
տիրապետել իր ձեռքին և բլրի զա-
դաթին, ամեհի և ջահակիր մարդու
վոտների տակ, գրեց՝ ԱԶԱՏՈՒ-
ՔՅՈՒԽՆ:

Դրելուց հետո՝ ժողոացին նրա կա-
պույտ աչքերը: Նստեց աթոռին, աջ
արմունկը հենեց կավակալին, ձախ
ձեռքը դրեց բլրի ստորոտը, ճակա-
տը հպեց սառը կալին, ճգնեց շնչել,
բայց ող չկար:

Հովնաթանը խաղաղությում միա-
կեց կասլույտ աչքերը:

Մարդարիտը, ամեն որվա նման,
առավույան իջավ աշխատանոցը նա
խաճաշով:

— Այս գիշեր նորից չի քնել, —
շնչաց նա, յերբ տեսավ Հովնաթա-
նին կավակալի վրա ընկած:

Մարդարիտը մոտեցավ, բռնեց յեղ-
բոր ձեռքը: Սառը: Գրկեց դլուխը,
շրթունքները տարավ ճակատին: Սա'
ոը, սա'ոը:

Բարձրացավ սրտակոսոր ճիչ:

Մի քրոջ սիրտ նկուղում՝ վողբուժ
եր յեղբորը:

Թաղումից հետո Մարդարիտն ի-
ջակ աշխատանոցը, թրջեց կալը-
ջրով և հորդառատ արցունքներով:

Իսկ մի քանի որ հետո, հաղալ նա
սկ չորերը, յերեսը ծածկեց մուգ քո-
ղով, գնաց հորեղբորվորդիներից մե-
կի մոտ, խնդրեց, վոր առանձին խը-
նամքով թրծի զովնաթանի հուշար-
ձանը:

Մարդարիտը դրեց հուշարձանը աշ-
խատանոցում, մեխեց լուսամուռնե-
րը, փակեց դուռը, զմաւեց և սսաց.

— Թո՛ղ փակ մնա, մինչեւ իմ ամե-
նավերջին զավակի մահը:

Եեվ փոշին իջակ և մոռացումը
պատեց զովնաթանի ստեղծագործու-
թյունները:

ԻԱ

Եեվ հանկարծ խլրաաց յերկիրը:
Նախ՝ հատուկտոր աղաղակներ լըս
վեցին յերկրի ընդերքներից, բայց

Հետզհետե վողջ սոցիալական հատու-
կըն սկսեց յերերալ, Մահվան հըլն-
դյունը խառնվեց բմբուտ աղաղակ-
ներին: Վեր բարձրացան մարդիկ,
վորոնք կառուցել եյին վողջ յերկի-
րը, վորոնց վոսկորները անքացել
եյին ֆիզիքական մթին աշխատան-
քից:

Եեվ շարժվեցին գործարաններից,
զաշտերից, նախահանդսատներից, ծո-
վերից, շարժվեցին ինողոցներից, ի-
ջան սարերից, խուժեցին գյուղերից
քաղաքները և քաղաքները հրդեհվե-
ցին, սուլեցին հրազդանները և ուայ-
թեցին թնդանոթները, տրորվեցին
վոսկյա թագերը, փշովեցին աղաման
դակուռ խաչերը, դոքովեցին մեծա-
տունների զգեստները, վորոնք հյուս-
ված եյին աշխատավորների արյու-
նով ու քրտինքով, շարժվեց բանակը
և պաշարեց պալատները, դղյակները,
կոտրատմվեցին բանտերի դռները և
մութ զնդաններից դուրս յեկան դը-

ուույն, քաղցած, մահամերձ, բայց
դաղաղած մարդիկ, վորոնք ատելու-
թյամբ վառված քանդեցին բռնակա-
լության վորջերն ու ամրոցները:

Վողջ յերկրի հետ միասին շարժից
և այն քաղաքը, վոր ծաղկած եր հին
պետի ափին:

Անհուն դաշտում հրդեհներ բռնկվե-
ցին, ծառերից ճոճվեցին մեծ և
փոքր բռնակալների մարմինները, նը
բանք ծնկի չոքեցին, բայց արդար և
սրբազն ատելությունը չխնայեց
վո՛չ վոքի:

Իշխանությունն անցավ գործարան
ների և դաշտերի հերոսներին:

Յել նոր մարդկությունը հիշեց
մեծ արվեստագետին, վոր կավից և
քարից կերտում եր մարդկության
թշվառությունը, զրկանքը և հալա-
ծանքը:

Մարգարիտը, վոր սպիտակ ծամեր
ուներ և թոռներ, բաց արավ Հովնա-
թանի աշխատանոցի դուռը, վորի

բանալին, յեղբոր մահից հետո, կը-
բում եր միշտ սրտի վրա:

Մաքրեցին թանձր փոշին մեծ ար-
վեստագետի ստեղծագործություննե-
րի վրայից:

Թանգարանում մի մեծ դահլիճ
հատկացվեց Հովնաթանի գործերի
համար, իսկ վերջին հուշարձանը
հանձնվեց յերիտասարդ՝ արվեստա-
գետներին՝ սպիտակ մարմարից քան-
դակելու համար: Փակ, մթին նկուղի
լուսամուտները բացվեցին, թարմ
ողը լցվեց ներս, յերգեցին յերիտա-
սարդ՝ արվեստագետների մուրճերը
վոսկյա հնչյուններով: Յերիտասարդ
արվեստագետները քանդակեցին հու-
շարձանն այնպես, ինչպես մեծ ար-
վեստագետն եր ծրադրել—բնական
մեծությամբ:

Այժմ այդ հուշարձանը կանգնած ե
քաղաքի մեջ հրապարակում, սպի-
տակ մարմարի տակ հանդչում ևն
Հովհաննի վոսկորները և բլրի առո
րոտում փորագրված ե՝

ՀՈՎՀԱՆՆԻ,
ՎՈՐԴԻ ՅԵՐԵՄԻԱՅԻ



ՀՀ Ազգային գրադարան



NL0339857

31375